

## Խմբագրական

### ՄԵՍՐՈՊՈՍԱՌ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԼԻՆԵՆՈՒԹԻՒՆՆ Է



Շուրջ 1650 տարիներ առաջ, հայ ժողովուրդը ապրեցաւ իր բազմահազարամեայ պատմութեան գերագոյն ճշմարտութեան պահը, եւ իր գոյութեան սպառնացող ստոյգ վտանգին տուաւ ապրելու եւ լինելու իր վճռական «ԱՅՈ»ն: Արդարեւ, իր քաղաքական անկախութիւնը կորսնցուցած Հայաստանը յայտնուած էր աշխարհաքաղաքական ծանրագոյն պայմաններու տակ: Արեւմտեան Հայաստանը միացած էր Բիւզանդիոսին, իսկ արեւելեանը՝ Պարսկաստանին: Հետեւաբար, ան վստահաբար կուլ պիտի երթար եւ ձուլուէր դրացի այդ հզօր պետութիւններուն, եթէ չկռուէր իր ներքին ամրութիւնն ու ինքնութիւնը:

Պատմական անողոք իրականութիւնը կը հրամայէր փնտռել ու գտնել ինքնուրոյն գոյութիւնը պահել-պահպանելու անկորնչելի միջոց ու հնար:

Քաղաքական իմաստուն հեռատեսութեամբ ու տեսլականով, Հայաստանի ղեկավարութիւնը՝ աշխարհիկ ու կրօնական, մտաւորական եւ քաղաքական իր թելերով, կրցաւ ճիշդ ըմբռնել պատմական բախտորոշ պահի հրամայականը եւ տուաւ իր ապրելու պատասխանը ազգի ինքնուրոյնութեան սպառնացող վտանգին դիմաց: Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ Կաթողիկոս եւ Վռամշապուհ թագաւոր ի գործ դրին իրենց միահամուռ ճիգերը եւ մեր ժողովուրդին ընծայեցին Մեսրոպեան Այբ-Բեն-Գիմը, որպէս հաւաքական ինքնութեան անկողոպտելի վահան, հաւաքական անձնագիր:

Այս այբուբենով է որ սկիզբ առաւ Ոսկեդարով բնորոշուած Լուսաւորութեան մեծ շարժումը Հայաստանի ամբողջ տարածքին: Բացուեցան դպրոցներ եւ գրչատուններ, հայերէնի թարգմանուեցաւ Աստուածաշունչը, ստեղծուեցան հայատառ դպրութիւն ու գրականութիւն, հայ արուեստի ու մշակոյթի գանձեր: Հայ ժողովուրդը նոր լոյսով ճանչցաւ ինքզինք, նոր որակ տուաւ իր ազգային գիտակցութեան, կերտեց այնպիսի ազգային դիմագիծ, որ տոկաց դարերու փոթորիկներուն եւ արհաւիրքներուն: Հայ գիրն ու մշակոյթը իրարու շաղկապեցին ազգի տարբեր հատուածներն ու հոսանքները, իրարու կամրջեցին աշխարհագրական ու ժամանակամիջոցի բաժանումները, իրերայաջորդ սերունդները եւ դարձան ազգի ինքնութեան եւ միասնականութեան հզօրագոյն պաշտպան ու վահան: Անխորտակելի կերտիչն ու դարբնոցը անոնց:

Հայերէն Մեսրոպատառ լեզուն է որ գերազանցօրէն կը սահմանէ մեզ ազգովին Հայաստանի մեջ թէ սփիւռքի տարածքին: Առանց անոր, «Հայոց հայրենիք» եւ «Հայ ազգ» հասկացութիւնները



պիտի պարպուէին իրենց իմաստէն, դառնալով սոսկ յաջորդաբար աշխարհագրական տարածք եւ դիմազուրկ հաւաքականութիւն: Անով է որ մենք կը ներկայանանք աշխարհին եւ մեր արժանավայել տեղը կը գրաւենք համաշխարհային քաղաքակրթութեան խճանկարին մէջ:

Այնքան յատկանշական կը հնչեն ֆրանսացի լեզուաբան, հայագետ Անթուան Մէյէի հետեւեալ խօսքերը. «Ոչ մի ազգ գոյութեան իր կամքն աւելի ուժեղ չի արտայայտել երկու հազար տարուան ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ աւելի յամառութեամբ չի պահպանել իր սեփական լեզուն: Հենց որ մի քանի հայեր ի մի են հաւաքուում իրենց գաղթած քաղաքում, հիմնում են տպարան և իրենց լեզուով թերթ են հրատարակում: Այնքան մեծ է քաղաքակրթական լեզուի կենսունակութիւնը»:

Տխուր է դիտարկել, սակայն, որ սփիւռքի տարածքին յատկապէս, օրէ օր կը նահանջէ հայոց լեզուն, նոր թափ կը ստանայ օտարախօսութիւնը, համատարած կը դառնայ հայերէնը տեղական եւ այլ լեզուներէ ստորադաս նկատելու միտումը: Տակաւին, ընկերային ցանցերուն մէջ, կ'ահագնանայ լատինատառ հայերէնը, մինչ մեր երկրէն ներս օտար բառերու ներխուժումը մեր Մեծասքանչ լեզուին, կը խաթարէ անոր մաքրութիւնը, հմայքն ու հրապոյրը, նկարագիրը...

Գործնապաշտ, օգտապաշտ եւ նիւթապաշտ նկրտումները կը սպառնան այլասերել ու այլանդակել ազգային ինքնութիւն ու դիմագիծ: Սկսած ենք բաւարարուիլ խօսակցական, կիսատ-պռատ եւ աղճատուած հայերէնով...եւ մենք մեզ խաբել թէթեւամտօրէն եւ թութակաբար կրկնելով որ բաւարար է զգացումով հայ ըլլալը: Հայ դպրոցը, Նոյնպէս, մոռացութեան տուած ըլլալ կը թուի իր գոյութեան հիմնական պատճառն ու սկզբունքը եւ առաջնահերթութիւնը տալ տեղական կամ օտար լեզուներու ուսուցումին: Իսկ պատրուակներ միշտ կարելի է գտնել: Նման տեղատուութիւնները ո՞ր կրնան արդեօք հասցնել մեզ:

Հայ Գիրերու Գիւտի հերթական տարեդարձը մեզ պէտք է մղէ հետեւեալ խորհրդածութեանց.-

-Նորովի իմաստաւորել հայերէն լեզուի էական, ճակատագրական դերակատարութիւնը ազգային լինելութեան համար:

-Արեւմտահայերէնի ճակատագիրը քննել եւ համապատասխան լուծումներ որոնել անոր պահպանման ի խնդիր, միշտ ի մտի ունենալով որ արեւմտահայերէնը միակ եւ գերագոյն մշակութային ժառանգն է բռնագրաւուած Արեւմտահայաստանին, որուն ժառանգորդներն ենք մենք՝ տարագիր սփիւռքահայերս, եւ որուն պահանջատիրական Դատին կ'երդնունք հետամուտ ըլլալ: Սա այն լեզուն է, որով գրեցին Վարուժանն ու Սիամանթօն, Դուրեանն ու Մեծարեւոյցը, Թէքեանն ու Օշականը եւ անբաժանելի մասն է հայոց լեզուին:

-Նոր որակ, նոր թափ ու կենսունակութիւն հաղորդել հայեցի կրթութեան եւ հայ դպրոցին, օգտագործելով նաեւ բոլոր արդիական արհեստագիտական միջոցները:



---

-Ամեն կերպով քաջալերել հայ գիրն ու գրականութիւնը, հայ մամուլը, հայ գիրքը:

-Նախանձախնդիր ըլլալ հայերէնի (իր զոյգ ճիւղերով) մաքուր, կարելի եղածին չափ անսխալ գործածութեան, գրաւոր թէ բերանացի:

Եւ փոխ առնելով մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի տողերը, կարելի է եզրակացնել.-

«Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյութեան եւ եութեան ամենախոշոր փաստը, ինքնուրույնութեան ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմութեան ու հեռաւոր անցեալի կախարդական բանալին, հոգեկան կարողութիւնների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանութիւնը»:

Պիտի կարենա՞նք ականջալուր ըլլալ եւ կեանքի կոչել ամենայն հայոց բանաստեղծի լուսաւոր եւ լուսաւորող պատգամը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Կիպրահայ

### ԿԻՊՐԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ի ՊԱՏՈՒԻ



Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2019-ին, Նիկոսիոյ Առաջնորդարանի Վ. Իւթիւճեան սրահին մէջ, տեղի ունեցաւ Կիպրահայ մամուլի ներկայացուցիչներու մեծարման հանդիսութիւն մը, կազմակերպութեամբ Կիպրոսի Թեմի Ազգային Վարչութեան, հովանաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթ. Փոխ. Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանի, նախագահութեամբ Յայ համայնքի Պետ. Ներկ. Վարդգես Մահտեսեանի: Ձեռնարկը համահունչ

Եր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետի՝ 2019-ը թուականը ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՏԱՐԻ հռչակելուն հետ:

Բացման խօսքով հանդես եկաւ Ձեռնարկը վարող՝ Տիկ. Լենա Պահատուրեան, որ նկատել տուաւ որ հայ առաջին տպագիր թերթի՝ «Ազդարար»-ի լոյս տեսնելէն ետք՝ 1794-ի Հոկտեմբեր 14-ին, Մատրասի մէջ, ցարդ 5000 մեծ ու փոքր պարբերականներ հրատարակուած են հայ կեանքէն ներս, ըստ մասնագետներու հետազոտութեանց: Ան ուրախութեամբ եւ հպարտութեամբ յայտարարեց որ այդ պարբերականներուն մէջ իր տեղը կը գրաւէ նաեւ Կիպրոսի փոքր գաղութը, որուն առաջին ամսաթերթը «Խարազան»ը լոյս տեսած է 1900 թուականին:

Ապա խօսք առաւ Ազգային Վարչութեան ատենապետ Պրն. Սեպուհ Արմենակեան, որ անդրադարձաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ 2019 թուականը «Հայ մամուլի տարի» հռչակելուն մասին եւ առ այդ ողջունեց Կիպրոսի մէջ հրատարակուող միակ տպագիր պարբերաբերթը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արձագանգը, որ կը հրատարակուի 1981-էն ի վեր, խմբագրութեամբ Պրն. Արթօ Դաւիթեանի: Նաեւ նշեց ելեկտրոնային թերթերը եւ անոնց այժմեականութիւնը ներկայ ժամանակներուն: Ան յատկապէս գնահատանքի խօսք ուղղեց կիպրահայ կեանքի անցեալն ու ներկան ակադեմականօրէն հետազոտող յոյն կիպրացի հետազոտող Ալեքսանտրո Յանիփրային, անոր տարած հայագիտական լայնածաւալ ուսումնասիրութեանց համար, որոնք տեղացի եւ օտար հանրութեան կը ներկայացնեն մեզ ըստ արժանւոյն:

Տիկ. Նայիրի Մուրատեան խոր ապրումով կարդաց Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնը, Նուիրուած հայոց լեզուին, ինչ որ գեղեցկօրէն ներդաշնակուեցաւ օրուան խորհուրդին հետ:



Այս առիթով, Լիբանանէն յատկապէս հրաւիրուած, «Ազդակ» օրաթերթի տնօրէն եւ գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեան գեկուցեց հայ մամուլի մասին:

Իր բովանդակալից խօսքին մէջ, յարգելի հիւր-բանախօսը բնութագրեց հայ մամուլի դերն ու նշանակութիւնը հայ կեանքէն ներս՝ նոր մարտահրաւերներուն դիմաց, մասնաւորելով տպագիր մամուլի դիմագրաւած դժուարութիւնները, երբ ընկերային ցանցերով լուրը կը սփռուի կայծակի արագութեամբ՝ սխալ կամ ճիշդ, եւ ուր ամէն օգտատէր արդէն լրագրող է, լուր սփռող, լուր տարածող... Ինչ ալ ըլլան արհեստագիտութեան համացանցային հնարաւորութիւնները, տպագիր մամուլը ունի մնայունութեան եւ արխիւայնութեան մասնայատկութիւնը, շեշտեց ան, եւ միշտ ալ կը փնտռուի յօդուածագիրներու կողմէ, որոնք իրենց գործերը կը սիրեն հրատարակուած տեսել տպագիր մամուլի էջերուն վրայ: Յամենայնդէպս, նշեց ան, ներկայիս բոլոր տպագիր թերթերը ունին նաեւ իրենց համացանցային տարբերակը, որպէսզի հասանելի ըլլան աւելի մեծ հանրութեան: Պրն. Գանտահարեան անդրադարձաւ Կիպրոսի մէջ հրատարակուող Արծազանգ թերթին, ինչպէս նաեւ «Կիպրահայեր», «Ազատ Խօսք» եւ այլ ելեկտրոնային թերթերուն, որոնց միջոցով կարելի կ'ըլլայ իրագել ըլլալ Կիպրոսի եւ կիպրահայ իրադարձութեանց, անգամ մը եւս յիշատակելով Կիպրոսի բացառիկ բարեկամական եւ հայամետ կեցուածքը, որով հայկական Տեղասպանութեան ժխտումը քրտորէն պատժելի արարք ընդունուած էր անոր խորհրդարանին կողմէ եւ անդրադառնալով Հայաստան-Կիպրոս-Յունաստան եռակողմ համագործակցութեան պարագային այլ բնագաւառներէն ներս ալ: Պրն. Գանտահարեան կարեւորեց հայ մամուլի դերակատարումը, մասնաւորապէս հանրային կարծիքի ձեւաւորման մէջ եւ գնահատանքով նշեց որ կիպրահայ մամուլը իր տեղն ու դերը ունէր համահայկական տեղեկատուական դաշտին մէջ:

Ձեռամբ Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի եւ Կարթ. Փոխ. Տէր Խորէն Արքեպիսկոպոսի, պարգեւատրուեցաւ 1981-էն ի վեր լոյս տեսնող Արծազանգ» տպագիր պարբերաթերթի գլխաւոր խմբագիր Արթօ Դաւիթեան, ապա՝ կիպրացի Տիար Ալէքսանտրո Հանիիրան, որ կիպրահայութեան մասին բազում ուսումնասիրութիւններ հրատարակած է, լաւապէս տիրապետած ըլլալով նաեւ հայերէն լեզուին: Ապա՝ յաջորդաբար բեմ հրաւիրուեցան եւ յուշանուէրներ ստացան ելեկտրոնային կայքերու եւ ընկերային ցանցերու պատասխանատուները՝ «Այբուբեն» Տիար Կարօ Գոչունեան, «Ազատ Խօսք» կայքի խմբագիր՝ Տիկին Երան Գույումճեան, «Կիպրահայեր»՝ Տիար Սիմոն Այնեճեան, «Կիպրոսէն Լուրեր»՝ Տիար Վիգէն Սարգիսեանն ու Տիկին Մարիլէ Դաւիթեան: Լիբանան հրատարակուող «Արարատ» օրաթերթի եւ «Պայքար» շաբաթաթերթի խմբագրական կազմի կիպրական հպատակութիւն ստացած անդամներ՝ Տիար Աւետիս Փօշօլեան եւ Տիկին Պայծիկ Գալայճեան:

Իր փակման խօսքին մէջ, Թեմիս Կարթ. Փոխ. Տէր Խորէն Արքեպիսկոպոս անակնկալ մը մատուցեց «Ազդակ» թերթի երկարամեայ տնօրէն ու խմբագիր Պրն. Շահան Գանտահարեանի, անոր նուիրելով խորհրդանշական յուշանուէր մը, շեշտելով որ ան նոր որակ ու մակարդակ բերած էր Ազդակին, անոր շուրջ ստեղծելով համերաշխութեան օրինակելի ոգի ու մթնոլորտ, դրուատելով նաեւ անոր բարեհամբոյր ու համեստ նկարագիրը, իր կոչումին բարձր գիտակցութիւնն ու պատասխանատուութեան ոգին: Տէր Խորէն Արքեպիսկոպոս բարձր գնահատեց մամուլի դերը հայ կեանքէն ներս, շեշտելով որ ան կոչումը ունենալու է ճշմարտութիւնը բարձրաձայնելու անաչառ եւ անկողմնակալ կերպով: Գնահատանքով նշեց կիպրահայ գաղութին վայելած կրթական եւ այլ առանձնաշնորհումները, որոնք առատօրէն կը պարգեւուին Կիպրոսի կառավարութեան կողմէ, եւ որոնց շնորհիւ գաղութը ունի Նարեկ հայկական վարժարանները եւ հայախօս համայնք: Ան կոչ ըրաւ միասնականութեան եւ մեր



---

տարանջատ ուժերու բռունցքաւորումին, ինչ որ կենսականորէն անհրաժեշտ է հայ կեանքի հզօրացման համար ամէնուր, շեշտեց Արթեպիսկոպոսը:

Բովանդակալից ձեռնարկը վերջ գտաւ ՊԱՅՊԱՆԻՉ աղօթքով:

ԲՈՆՈՐԻՆ ԿԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ:

ԱՉԱՏ ԽՕՍՔ

## Կիպրահայ

### ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԱՐԵԿԻ ՄԷՋ



Չորեքշաբթի, 16 Հոկտեմբեր 2019-ին, կեսօրուան ժամը 12:00-ին, Թարգմանչաց Տօնին առիթով տեղի ունեցաւ աշակերտական տարեկան հանդէսը Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի հանդիսասրահէն ներս Յովնանաւորութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանի: Ներկայ էին Նիկոսիոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ.

Մովիկ Քիւյ. Հապէշեանը, Ազգային Վարչութեան եւ Միութիւններու ատենապետ եւ անդամներ, Լիբանանէն հանգուցեալ հանրաժանօթ մտաւորական Պօղոս Սևապեանի դուստրը՝ Թամար Սևապեան – Սուրճեան, Նարեկ Վարժարաններու Հոգաբարձութեան անդամներ, Տնօրէնութիւն, Ուսուցչական կազմ, պատասխանատուներ եւ քանի մը տասնեակ ծնողներ ու բարեկամներ: Յայտագրի բացումը կատարեց վարժարանի ուսուցիչ՝ Պրն. Յակոբ Էսքիճեան եւ յաջորդաբար Մանկապարտեզի, Նախակրթարանի եւ Միջնակարգի աշակերտները ներկայացուցին ընտիր յայտագիր մը հետեւեալ շարքով.- «Սուրբ Թարգմանչաց տօնի Նշանակութիւնը»՝ (Գ. Միջնակարգ), «Ա., Բ., Գ.» երգ (Բ. Մանկապարտեզ), «Այբ Բեն Գիմիդ»՝ (Նախապատրաստական եւ Ա. Դասարաններ), «Մեսրոպեան տառեր»՝ (Գ. Դասարան), Օրուան պատգամը փոխանցեց՝ Պրն. Յակոբ Էսկիճեան եւ ապա, դարձեալ յայտագրի շարունակութեամբ աշակերտները հանդէս եկան «Այբուբեն հայոց»՝ (Դ. Դասարան), «Հայերէն»՝ (Ե. Դասարան), «Թարգմանչաց տօնի եւ հայերէնի մասին ներկայացում»՝ (Զ. Դասարան), «Հայ աշակերտին ուխտը»՝ (Բ. Դասարան), «Հայ եւ օտար վկայութիւններ հայերէնի մասին»՝ (Ա. Միջնակարգ), «Թատերական ներկայացում»՝ (Բ. Միջնակարգ), խմբերգներ՝ «Մեր Լեզուն» եւ «Հայերէն կ'երգենք»՝ (վարժարանի աշակերտական երգչախումբ): Ծուրջ մէկ ժամ տեւած հանդէսի ընթացքին, աշակերտները խանդավառութեամբ եւ հայկական շունչ ու ոգիով ելոյթ ունեցան ասմունքներով, խօսքերով, արտասանութեամբ, երգերով եւ թատերական ներկայացումով:

Հանդէսի աւարտին Վարժարանի տնօրէնուհի՝ Տիկին Վերա Մկրտիչեան – Թահմազեան գնահատական ու շնորհաւորական իր խօսքը փոխանցեց Ուսուցչական Կազմին եւ աշակերտութեան ու ապա հրաւիրեց Կաթողիկոսական Փոխանորդը, որ Օրինութեան խօսքով եւ «Պահպանիչ»ով փակէ հանդիսութիւնը: Սրբազան Հայրը քաջալերով աշակերտութիւնը հոգեւոր ու ազգայնաշունչ խօսքով հանդէս եկաւ վեր առնելով Թարգմանչաց Սերունդին մեզի թողած կտակը, Հայ Լեզուի կարեւորութիւնը, Հայ Ընտանիքի եւ Դպրոցի առաքելութիւնն ու անհրաժեշտութիւնը հայեցի եւ հոգեւոր դաստիարակութեան: Ան մեջբերելով զանազան



---

գրագետներու եւ բանաստեղծներու խօսքերէն յորդորեց՝ բազմաթիւ լեզուներ սորվին եւ սակայն, Մայրենի Լեզուն թող աւելի համարձակ եւ գերազանցապէս խօսին:

17 Հոկտեմբեր 2019

Դիւան Ազգային Առաջնորդարանի



## Յօդուածներ

### ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ՝ ՄԱՀԱՅՈՂ ԻՄՓԵՐԻԱԼԻԶՄՆ Է...

«Մեր սովետ թշնամին չքացաւ... պէտք է ստեղծենք՝ նոր թշնամի մը...»

#### Մարկարէթ Թաչէր



Ռիկան-Թաչէրեան վայրագ Նոր-ազատականութեան տեսաբան «երկաթեայ կինը», երբ մասամբ շփոթեցաւ տեսնելով Սովետ Միութեան ինքնալուծարումը, անյապաղ Ռիկանին ըսաւ. «Այսուհետեւ ալ մեր Նախընտրած միջազգային քաղաքականութիւնը Նոյնութեամբ կարենալ շարունակելու համար, մենք պետքը ունինք ստեղծելու մեր Նոր քաղաքական Նոխազը՝ Նոր թշնամին. այս անգամ՝ անդիմագիծ, անհասցէ եւ անորոշ «թշնամին»... սնդիկային»:

Եւ՝ մահացող իմփերիալիզմի «վերջին երկու մոհիկանները» հեղինակեցին «ահաբեկչութիւն» կոչուող բազմադիմագիծ, բազմահասցէ եւ բազմանուն ու բազմագլուխ իրենց ձեռնածու «թշնամի»ն...: Այս միջազգային ծննդաբերութեան երկունքի ցաւերն ու ջղագարումներն են՝ մահացող իմփերիալիզմի գալարումները, անոր փոխանորդներու միջոցով շարունակած պատերազմը՝ հոս ու հոն եւ անդին, պատառ-պատառ, զորս Ֆրանչիսկոս Ա. Պապը անուանեց՝ Գ. Աշխարհամարտ...:

Բաբելոնի աշտարակին Նմանող խճողուած գրադարաններուս մէջէն իր գլուխը ցցած էր գիրք մը, որուն առաջին կողքին գլուխը կար կարմիր գիրերով՝ Նօամ Չոմսքիի անունը, եւ անոր Ներքեւ՝ գիրքին խորագիրը. "POWER AND TERROR, Post 9/11 Talks and Interviews" (Իշխանութիւն եւ Ահաբեկչութիւն, Յետ 9/11-ի Չրոյցեր եւ Տեսակցութիւններ), հրատարակուած 2003-ին, Գանատայի մէջ, Նիւ Եորքի Seven Stories Press եւ Թոքոյի LiHe More հրատարակչատուններէն, խմբագրութեամբ John Junkerman-ի եւ Takai Masakazu-ի, եւ վերահրատարակուած 26 երկիրներու մէջ. Ճափոնի մէջ հրատարակութեան խորագիրն է. "Power and Terror: Noam Chomski in our Times" եւ John Junkerman Ճափոնի մէջ հրատարակած է ճափոներէն, եւ՝ Նոյնանուն ֆիլմ մը պատրաստած:

Չաւանաբար այս հատորը կը բովանդակէ Նօամ Չոմսքիի վերջնագոյն գաղափարներն ու դիտարկումները, որոնք արտայայտուած են երկար տեսակցութեան մը եւ շարք մը զրոյցներու մէջ, զորս ան տուած է Նիւ Եորքի եւ Գալիֆօրնիոյ մէջ՝ 2002 տարուայ գարնան, հիմնական մեկնակետ ունենալով 11 Սեպտեմբերի «ահաբեկչական» բեմադրութիւնը: Ան, իբր կանոն, յետ Բ. Աշխարհամարտի տասնամեակներուն պատահած բոլոր պատերազմները (Կիւբա, Վեդրոնական Ամերիկայի եւ Միջին Արեւելքի մէջ) կը նկատէ պետական միջազգային ահաբեկչական գործողութիւններ, որոնք սակայն կատարուած են ԱՄՆ-ի արտաքին միջամտութիւններուն կողմէ, եթէ Նոյնիսկ արտաքնապէս աստուց տեսանելի հերոսները ծայրայեղական իսլամ կազմակերպութիւններ են, որոնց միակ ամբողջական ցուցակը



պահուած է CIA-ի արխիւներուն մէջ, կ'ըսէ Չոմսքի, քանի որ զանոնք ստեղծողը՝ ամերիկեան իմփերիալիզմն է...:

Չոմսքի կը վկայէ նաեւ՝ թէ 20-րդ դարու 60-ականներուն, Լատին Ամերիկայի Կաթոլիկ եկեղեցւոյ յեղափոխական կարտինալներուն եւ աստուածաբաններուն որդեգրած «Ազատագրութեան Աստուածաբանութեան» արեան մէջ խեղդողը CIA-ն էր: Չոմսքի կը պնդէ՝ թէ աշխարհի բոլոր ծագերուն մէջ կատարուող ահաբեկչական գործողութիւններուն ետին կանգնած են CIA-ի մարդիկը: Ան սարքազմով կը գրէ. «Ամէն զօրեղ իշխանաւոր մտահոգութիւն կը յայտնէ, թէ՛ ինչպէս կարելի է վերջ դնել ահաբեկչութեան: Շատ լաւ: Կայ շատ դիւրին ձեւ մը՝ որ անոնք դադրին մաս կազմելէ ահաբեկչութեանց»...:

Անոր ծննդեան 75-ամեակին զուգահիստի այս հրատարակութեան առիթով, անոր հարց կու տան. "How you have become for four decades the world's most famous political activist?": Ան կը պատասխանէ. "One cannot become socio-political activist working part-time. If you get started, it is going to be all-consuming, and I had lots of things to write and talk. I was not an activist. But it was February 1939 (իսկ ծնած է 1928-ին) after the fall of Barcelona in Spain, and fascism spread in Europe. I wrote my first article against fascism when I was eleven. When it becomes impossible not to become involved... you will be involved. And I was happy doing it, and did not want to give it up":

Աւելորդ չէ յիշել, որ Seven Stories Press հրատարակչատունը, որ հաստատուած է Նիւ Եորքի մէջ, ԱՄՆ-ի ամէնէն յառաջապահ հրատարակչատունն է վստահաբար, եւ այս հատորին մէջ ինք իր մասին կը գրէ թէ՛ ունի յառաջապահ առաքելութիւն մը քաջալերելու ազատ խօսքը ընդդէմ ԱՄՆ-ի ռազմապաշտութեան եւ ի նպաստ՝ համաշխարհային խաղաղութեան եւ ընկերային արդարութեան... որոնք կոմունիստական եւ ճշմարիտ դեմոկրատական առաջադրանքներ են: Ասոր կայքէջն է՝ [www.sevenstories.com](http://www.sevenstories.com): Ասիկա կը թելադրէ կարդալ հետեւեալ հատորները.

Gore Vidal, *The Decline and Fall of the American Empire*, Odonian Press 1993.

Noam Chomsky, *Acts of Aggression, Rogue States* (Introduction Edward W. Said), Seven Stories Press (Open Media Series), 1999. (Էտուար Սայիտ, պաղեստինցի յանձնառու եւ յառաջապահ մտաւորականն է, որ ծանօթ անունն է միջազգային ակադեմական աշխարհին մէջ):

Noam Chomsky, *American Power and the New Mandarins* (Introduction Howard Zinn), New Press, 1969, 2002 (Չինն ամերիկացի խիզախ ու ճշմարտախօս պատմաբանն է, որ գրած է Միացեալ Նահանգներու ժողովրդական պատմութիւնը, հետեւելով պետական, պաշտօնական պատմութեան):

Noam Chomsky, *Fateful Triangle: The United States, Israel and the Palestinians*, 2nd edition, South End Press, 1999.

Noam Chomsky, *Necessary Illusions: Thought Control in Democratic Societies*, South End Press, 1989.

Noam Chomsky, *Pirates and Eperors, Old and New International Terrorism in the Real World*, South End Press, 1986, 2002.

Noam Chomsky, *Profit Over People: Neoliberalism and Global Order*, Seven Stories Press, 1999.



Noam Chomsky, Propaganda and the Public Mind, Interview by David Barsamian (Դաւիթ Պարսամեան միջազգային հայ հրապարակախօսն է, որ Չոմսքիի հետ տեսակցութիւններու բազմաթիւ հատորներ հրատարակած է), South End Press, 2002.

Noam Chomsky, Umbrella of U.S. Power: The Universal Declaration of Human Rights and the Contradictions of U.S. Policy, Seven Stories Press (Open Media Series), 1999. (Ամերիկեան Իմփերիալիզմի իշխանութեան umbrella-ին տակ պաստպարուիլ կը նախընտրէր՝ ուսուցիչս Փանոս Թիթիգեանը... ցուրտ պատերազմի տարիներուն, որպէսզի Սփիւռքի մէջ Տարագիր Արեւմտահայութիւնը ապահով զգար... եւ՝ Սովետ Միութեան հինգերորդ զօրասիւնը չնկատուէր... մեր Սովետ Դայաստանի հանդէպ ցուցաբերած անմնացորդ սիրոյն պատճառով...):

Նօամ Չոմսքիի տասնեակներով հատորներէն այս հատընտիր շարքին, որուն մէջ բոլոր յիշուածներուն միայն մէկ մասն է վերը մեջբերուածը, իբր պսակում յիշուած է նաեւ՝ Peter Mitchell-ի եւ John Schoeffel-ի համահեղինակութեամբ, Նօամ Չոմսքիին նուիրուած եւ 2002 թուին New Press-էն հրատարակուած հատորը, որուն խօսուն խորագիրն է՝ "Understanding Power: The Indispensable Chomsky" (Անփոխարինելի Չոմսքին...):

Եթէ ամերիկեասիոնական իմփերիալիզմի ուժին Էութիւնը հասկնալու համար անխուսափելի Չոմսքիի բնութագրումն է, օսմանեան թուրքերու Էութիւնը հասկնալու համար ալ, հաւանաբար անխուսափելի է՝ ֆրանսացի եւ պարսիկ գրողներու տուած բնութագրումը անոնց: Պարսիկ Նիզամին ըսած է. «Հաւատարիմ թուրք չկայ»: Իսկ պարսիկ Ֆիրդուսին. «Չարմանալի չէ որ թուրքը չհասկնայ սերը: Թուրքին մօտ՝ զարմանալին, անոր չթալանելն է, չգողնալն է, չզաւթելն է...»: Վիթթոր Դիկոս, աներակներու դիմաց. «Թուրքեր անցած են այստեղէն...»:

Ամերիկեասիոնական իմփերիալիզմի Էութիւնը, անփոխարինելի Չոմսքիի համաձայն, ահաբեկչութիւնն է համաշխարհային մակարդակով:

Այս հատորը կ'ընդգրկէ չորս մասեր, որոնց երկրորդին պիտի անդրադառնանք այս գրութեամբ, յառաջիկային երկրորդ գրութեամբ մըն ալ՝ անդրադառնալու համար երրորդ մասին:

Հատորի երկրորդ մասը կը խօսի ԱՄՆ-ի միջազգային դերակատարութեան մասին, որ եղած է ահաբեկչական, քանի որ ունեցած է ռազմական մեծագոյն ուժը աշխարհի մէջ, ոչ միայն Բ. Աշխարհամարտի վաղօրէին հիւլէական զէնքին մենաշնորհով... զոր ցոյց տուաւ աշխարհին՝ անով ոմբահարելով Դիրոշիման ու Նակազաքին, այլեւ՝ մինչեւ մեր օրերը...:

(Ուշագրաւ է այն, որ «Ալ-Տիար» թերթի խմբագրապետ Շառլ Այեուպ, անցնող Յուլիսի 24-ին, թերթի առաջին էջին վրայ, նախագահ Թրամփին ուղղած իր բաց նամակը խորագրած է. «Պրն. Նախագահ Թրամփ, Անունդ Արձանագրել Տուր Որպէս Աշխարհի Թիւ ՄԷԿ Ահաբեկիչը...»):

Այս Բ. մասին իբր մուտք, հեղինակը կ'ըսէ. «Տրուած ըլլալով որ ԱՄՆ աշխարհի ռազմական թիւ մէկ ուժն է, եւ մենք՝ ԱՄՆ-ի քաղաքացիներս, կը վայելենք աշխարհի ամենէն արտասովոր չափի ազատութիւն, ուրեմն, պարտաւոր ենք մենք աշխարհին ներկայացնել՝ ԱՄՆ-ի իսկական դերակատարութիւնը, եւ անոր իրական անշարք դիմագիծը...»:

Չոմսքի կ'ըսէ, թէ՛ ԱՄՆ-ի միջազգային ահաբեկչութիւնը կը կատարուի մէկէ աւելի եղանակներով եւ խողովակներով, որոնց շարքին ամենէն թափանցիկը՝ ԱՄՆ-ի զինուորական օգնութիւններու խողովակն է, եւ այս դերը կը կատարէ «Ահաբեկչութեան Դեմ Պատերազմ»



շնական կարգախօսով...: Եւ ըստ ԱՄՆ-ի պատասխանատուներուն, ահաբեկչութեան երկու գլխաւոր դաշտերն են՝ Կեդրոնական Ամերիկեան եւ Միջին Արեւելքը:

Չոմսքի կը գրէ. «1980-ականներուն, Կեդրոնական Ամերիկան վերածուած էր գերեզմանատան մը, ուր հարիւր հազարներով մարդիկ ջարդուեցան, մէկ միլիոնէ աւելի փախստականներով ու որբերով, մեծ թիւով մարդոց չարչարանքով՝ բարբարոսային... երեւակայել կարելի միջոցներով: Կեդրոնական Ամերիկայի՝ Նիքարակուէ, Էլ-Սալվատոր, Յոնտուրաս, Կուաթեմալա, երկիրներէն միայն Նիքարակուէի մէջ ամերիկեան բանակը ուղղակի միջամտեց, քանի որ այս երկիրը զուրկ էր բանակէ... միւսներուն բանակներն են, որ գործադրեցին ԱՄՆ-ի պահանջած ահաբեկչութիւնները՝ ԱՄՆ-էն ստանալով զինուորական օգնութիւն: Նիքարակուէն տառացիօրէն քարուքանդ եղաւ: Եւ քանի որ հոս երկիր մը ուրիշ երկրի մէջ կը միջամտէ, Նիքարակուէն դիմեց ICJ (International Court of Justice): Այս միջազգային ատեանը ԱՄՆ-ը դատապարտեց «միջազգային ահաբեկչութիւն» գործած եւ «ուժի հակաօրինական» ձեւի գործածութիւն ըրած ըլլալու ոճիրներով եւ «միջազգային համաձայնագրեր ոտնահարած ըլլալու յանցանքով» եւ հրահանգեց ԱՄՆ-ի կառավարութեան անմիջապէս դադարեցնել ոճիրները եւ Նիքարակուէի վճարել համապարփակ հատուցումներ: ԱՄՆ-ի հակադարձութիւնը եղաւ պատերազմին մագլցումը, այս անգամ ալ՝ ռմբահարելով «կակուղ թիրախներ» (soft targets) կոչուած դարմանատուներ, հողագործական համագործակցականներ, եւայլն... մինչեւ 1990, երբ բնակիչները ի նպաստ քուէարկեցին ԱՄՆ-ի ուզած նախագահական թեկնածուին...: Նիքարակուէ այս անգամ ալ դիմեց ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին, որուն դատապարտութեան վճիռին դէմ ԱՄՆ օգտագործեց իր «վեթօ»ի իրաւունքը...: Ուրեմն, այսօր, «ահաբեկչութեան դէմ պատերազմ»ի առաջնորդ պետութիւնը՝ ԱՄՆ, եղաւ աշխարհի այն միակ պետութիւնը, որ Միջազգային Ատեանին կողմէ դատապարտուեցաւ «միջազգային ահաբեկչութիւն» գործած ըլլալուն համար...: ԱՄՆ-ի ահաբեկչական ոճիրներուն մասին կան փաստաթուղթեր, որոնք հրատարակուած են գաղտնօրէն, տիրահոռչակ «Ամերիկաներու Դպրոց»ին կողմէ (CIA-ի արխիւներու կեդրոնը) հպարտանալու համար ԱՄՆ-ի «յաջողուցած» ոճիրներով: Այդ փաստաթուղթերէն մէկը կ'ըսէ. «Միացեալ Նահանգներու բանակը օգնեց՝ պարտութեան մատնելու համար «Ազատագրութեան Աստուածաբանութիւնը», որ ԱՄՆ-ի մղած «ահաբեկչութեան դէմ պատերազմ»ին հիմնական թիրախներէն մէկն էր...»: Ուրեմն, Լատին Ամերիկայի Կաթոլիկ Եկեղեցին թիրախն էր ԱՄՆ-ի հակա-ահաբեկչութիւն պատերազմին, քանի որ գործած էր ծանրակշիռ սխալ մը՝ եկեղեցին դուրս քաշելով շահագործող դասակարգին ճամբարէն, զայն դարձուց «դէպի աղքատները» նախապատիւ ընտրանքը... (Ֆրանչիսկոս Ա. Պապը, որ Ազատագրութեան Աստուածաբանութեան հետեւորդներէն էր, Արժանթինի մայրաքաղաքին թեմակալ առաջնորդը եղած օրերուն, շատ լաւ կը ճանչնայ ամերիկեան իմփերիալիզմի «համաշխարհայնացում» կոչած արդի ստրկատիրութիւնը կամ վայրի դրամատիրութիւնը):

Յոս՝ Չոմսքի կը թուէ ԱՄՆ-ի մարզած եւ զինած ահաբեկիչներու կողմէ ջարդուած Ազատագրութեան Աստուածաբանութեան հետեւորդ 70,000 գիւղացի, արբեպիսկոպոս մը, վեց ականաւոր չէիս մտաւորականներ եւ մի քանի տասնեակ ճեզուիթ մտաւորականներ, որոնց անունները ծանօթ չեն աշխարհին: ԱՄՆ-ի գործած ոճիրներուն մասին արգիլուած է խօսիլ բոլորին...: Այս հարցին մէջ, կ'ըսէ Չոմսքի, պատասխանատուութիւն կը կրեն ոչ միայն ԱՄՆ-ի մտաւորականները, այլեւ՝ համայն աշխարհի մտաւորականներն ու ՉԼՄ-երը...:

•••



«ԱՄՆ-ի յայտարարած հակա-ահաբեկչական պատերազմին մեջ՝ ԱՄՆ-ի գործած ահաբեկչութեանց երկրորդ դաշտը Միջին Արեւելքն է, ուր գործուած ոճիրներուն ամենէն սահմոկեցուցիչներէն մէկն էր, 1982 թուին կը գրէ Չոմսքի, Իսրայելի ներխուժումը Լիբանան, որուն ընթացքին ջարդուեցան մօտ 20,000 մարդիկ»:

Չոմսքի կը բացատրէ. «Այս ներխուժումը միջազգային ահաբեկչութիւն էր, որ կարելի դարձաւ քանի որ ԱՄՆ-ը տուաւ կանաչ լոյսը, հայթայթեց զէնքերը, եւ ապահովեց դիւանագիտական նեցուկ՝ «վեթօ» դնելով ՄԱԿ-ի շարք մը որոշումներուն դէմ: Իսրայելի բանակի սպայակոյտի պետը՝ Չօր. Ռաֆայէլ Էյթան շեշտեց թէ ասիկա յաջող գործողութիւն մըն էր, որ կրցաւ ՊԱԿ-ը հեռացնել Միջին Արեւելքէն, արգիլելով անոր մասնակցութիւնը գրաւեալ տարածքներու շուրջ ընթացող բանակցութիւններուն, քանի որ ՊԱԿ-ը կը մերժէր անձնատուութիւնը եւ կը պահանջէր՝ Արաբ-Իսրայելեան հակամարտութեան հանգուցալուծումը բանակցութեան ճամբով, որուն դէմ էր Իսրայելը»:

Չոմսքի կ'աւելցնէ, թէ՛ այս ներխուժումով եւ ջարդերով ձեռքբերուած յաջողութիւնը՝ դասագիրքերու տալիք «միջազգային ահաբեկչութեան» տիպար օրինակ մըն է, ասոր մեջ ԱՄՆ-ի խաղացած գլխաւոր դերին պատճառով: Նաեւ այն պատճառով, որ ամբողջովին կը համապատասխանէ «միջազգային ահաբեկչութեան» ամերիկեան բանաձեւումին, որ կ'ըսէ. "The threat or use of violence to achieve political, religious or other ends through intimidation, inducing fear, and so on, directed against civilian populations": Չոմսքի կ'աւելցնէ. "Israel's invasion of Lebanon is a textbook example of international terrorism, because of the decisive U.S. role": Չոմսքի դիտել կու տայ, որ Իսրայելի ներխուժումը պարզապէս միջազգային ահաբեկչութիւն որակելը ամենէն բարեացակամ որակումն է, քանի որ անկախ պետութեան մը դէմ ներխուժումը շատ աւելին է, եւ՝ արժանի Նիւրեմպերկեան դատավարութիւններու...:

Ապա Չոմսքի մի առ մի կը նկարագրէ՝ 1985 թուին, ԱՄՆ-ի կողմէ հովանաւորուած իսրայելեան ահաբեկչական երեք քստմնելի գործողութիւններ՝ Պէյրութի, Թունիսի եւ Յարաւային Լիբանանի մեջ, որոնց ընթացքին, յիշուած կարգով՝ սպաննուած են 75 քաղաքացիներ եւ վիրաւորուած 250 հոգիներ Պէյրութի մեջ, մզկիթէ մը դուրս ելլելու պահին, 80 մեռեալ եւ 120 վիրաւոր Թունիսի մեջ, իսրայելեան օդուժին ռմբակոծումներով, եւ՝ չբացայայտուած թիւով մեռեալներ ու վիրաւորեալներ՝ Յարաւային Լիբանանի մեջ՝ Շիմոն Փերեզի ղեկավարած «Երկաթեայ Բռունցք» գործողութեան ընթացքին, սիոնական բանակին եւ Իսրայելի գործակալ Լահտի միլիշիային ձեռամբ: Չոմսքի կ'ըսէ թէ՛ ամերիկեալսիոնական ոճիրները եթէ գործուին անոր ազդեցութեան գօտիներուն մեջ, մեռեալներու եւ վիրաւորեալներու թիւերը չեն բացայայտուիր... արգիլուած է՝ ամերիկեալսիոնական մամուլին, կատարել այդպիսի բացայայտումներ...: (Լիբանանեան բանակի զօրավարներէն՝ գործակալ Լահտը եզակի երեւոյթ մը չէ: Նացիական գրաւումի օրերուն, Ֆրանսայի վիշիական կառավարութիւնը նացիներու գործակալն էր: Իսկ Լիբանանի ֆրանսական գաղութ եղած օրերուն, Լիբանանի խորհրդարանին մեջ կային հինգ լիբանանցի երեսփոխաններ, որոնք Լիբանանի անկախութեան դէմ քուէարկեցին. ասոնց շարքին էր հայ երեսփոխան մը՝ Մովսէս Տէր Գալուստեան անունով):

•••

Չոմսքի կ'ըսէ թէ՛ Կեդրոնական Ամերիկայի, Միջին Արեւելքի, նաեւ՝ Յարաւային Ափրիկէի մեջ կատարուած պետական ահաբեկչութիւնները ամերիկեան իմպերիալիզմի եւ բրիտանական գաղութարարներուն կողմէ, ԱՄՆ-ի, Մեծն Բրիտանիոյ եւ ասոնց դաշնակից պետութիւններուն



մէջ, չեն արձանագրուած որպէս միջազգային ահաբեկչութիւններ, ընդհակառակը՝ կ'արձանագրուին իբր հակա-ահաբեկչական պատերազմ, իսկ երկրի ազատագրութեան համար մարտնչող ազատամարտիկները՝ կը կոչուին ահաբեկիչներ... ճիշդ այնպէս՝ ինչպէս Նացիները երկրի փարթիզանները կը կոչէին ահաբեկիչներ, որոնց դէմ իրենց հալածանքը ուրեմն կը կոչուէր հակա-ահաբեկչական պատերազմ: Օրինակ. Ֆրանսայի մէջ, Նացիներու դրածոյական Վիշիի իշխանութեան դէմ մարտնչող ֆրանսացի հայրենասէր դիմադրականները կը կոչուէին ահաբեկիչներ: (Նոյնպէս՝ Իսրայէլ, Յրգապալահի եւ պաղեստինցի դիմադրականները կը կոչէ ահաբեկիչներ, եւ Թուրքիա՝ PKK-ի ազատամարտիկները կը կոչէ ահաբեկիչներ):

Չոմսքի կը վկայէ թէ՛ 1980-ականներուն, Էլ-Սալվատորի բռնատիրական վարչակարգը կը ստանար ամերիկեան մեծագումար զինուորական օգնութիւն, անշուշտ նուազ քան Իսրայէլն ու Եգիպտոսը, եւ կը գործադրէր ամերիկեան իմփերիալիզմի բոլոր պետական ահաբեկչութիւնները մինչեւ՝ Ազատագրութեան Աստուածաբանութեան վերջնական քախջախումը ամերիկեան բանակի ուղղակի միջամտութեամբ...: Եւ՝ 1980-ականներու վերջաւորութենէն մինչեւ 1990-ականները՝ Թուրքիան եղաւ ԱՄՆ-ի պետական ահաբեկչութիւնները գործադրող գլխաւոր երկիրը: 1999-ին, Գոլումպիան դարձաւ ԱՄՆ-ի պետական ահաբեկչութիւնները գործադրող գլխաւոր երկիրը: Չոմսքի կը ծանրանայ Թուրքիոյ կատարած քստմնելի ոճիրներուն եւ խենեշութիւններուն վրայ եւ կը վկայէ, թէ՛ Գլինթոնի Նախագահութեան չորս տարիներուն ընթացքին միայն, Թուրքիան ԱՄՆ-էն ստացած է այնքան զինուորական օգնութիւն, որքան ստացած էր Թուրքիան ցուրտ պատերազմի ամբողջ շրջանին: Չոմսքի կը խօսի Գոլումպիոյ բռնատիրական վարչակարգին գործած հրէշային ոճիրներուն ու բարբարոսային վայրագութիւններուն մասին, եւ կը յիշէ բանակի զօրավար մը, որ... սղոցով կը սղոցէր որջ-որջ մարդիկ եւ զանոնք կը թափէր գետերու կամ կոյուղիներու մէջ...: Բայց յետոյ, այդ զօրավարը իբր թէ կը դատուէր ու կը բանտարկուէր, ըսելու համար, որ Գոլումպիոյ մէջ՝ ոճիրները անպատժելի չեն մնար...:

Այս նոյն կեղծիքը ԱՄՆ-ի կառավարութիւնը ըրած է Թուրքիոյ մէջ: Մարդու իրաւանց թուրք պաշտպան մը՝ Իսմայիլ Պէշիքճի անունով, հրատարակած է հատոր մը՝ «Պետական Ահաբեկչութիւնը Միջին Արեւելքի Մէջ» վերնագրով, որուն մէջ կը յիշուին Նաեւ Թուրքիոյ մէջ գործուած պետական ոճիրները: Թուրք կառավարութիւնը Իսմայիլ Պէշիքճին կը դատապարտէ 15 տարուայ ազատազրկումի: ԱՄՆ-ի CIA-ի ձեռնածու կազմակերպութիւններէն մէկը՝ U.S. Fund for Freedom of Expression, Իսմայիլ Պէշիքճիին կու տայ 10,000 տոլարի մրցանակ մը, երբ ան դուրս կու գայ բանտէն, 15 տարիներ հոն ծառայելէ յետոյ... Պէշիքճի կը մերժէ այս կաշառքը, հրապարակաւ բացատրելով. «Ես չեմ կրնար ընդունիլ մրցանակ մը Միացեալ Նահանգներէն, քանի որ ան մասնակից մեղսակիցն է Թուրքիոյ պետական ահաբեկչութեանց...»:

Չոմսքի կը յիշէ Նաեւ 1994 թուին, Թուրքիոյ Մարդու Իրաւանց պետական կոմիսարին վկայութիւնը, թէ՛ իր կառավարութիւնը քրտական շրջաններուն մէջ կը գործէ պետական ահաբեկչութիւններ, որոնց իբր հետեւանք, կան երկու միլիոն քիւրտեր՝ բռնահանուած իրենց տուններէն, եւ մօտ տասնեակ հազարաւոր սպաննեալներ:

Մի քանի ամիսներ վերջ, Մարդու Իրաւանց պաշտպան քիւրտ իրաւապաշտպան մը՝ Օսման Պայտեմիր, յայտարարած է թէ՛ բռնահանեալներու թիւը հասած է երեք միլիոնի... իսկ մեռեալներունը՝ 50,000-ի: Քրտական Ամանորի (Newroz) հանդիսութիւններուն, Պայտեմիր կը ձերբակալուի թուրք ոստիկանութեան կողմէ, քանի որ Ամանորի քրտական Newroz-ը գործածած է, եւ չէ գործածած թրքական Nevroz ձեւը...:



Չոմսքի երկարօրէն կը խօսի Գոլումպիոյ բռնատիրական արիւնստիում վարչակարգին գործած պետական ահաբեկչութիւններուն մասին, երկրի բանակին հինգ զօրասիւններուն կողմէ, նաեւ՝ կիսա-զինուորական (paramilitary) ջոկատներուն կողմէ, որոնք կը կազմեն բանակին վեցերորդ զօրասիւնը, ԱՄՆ-ի ցուցմունքներուն համաձայն, եւ ԱՄՆ-ի պատասխանատուները՝ ծածկելու համար իրենց ապսպրած միջազգային ահաբեկչութիւնները, Գոլումպիան կը գովէին իբր դեմոկրատիայի եւ մարդու իրաւանց պաշտպան օրինակելի տիպար երկիր: Ան կը յիշէ նախագահ Գլիթսոնի եւ Չօր. Գոլին Փաուելի անունները: "Colombia was praised by Clinton for example, as a leading democracy, and for its economic reforms. And a couple of weeks ago, in early May 2002 Colin Powell determined that Colombia meets Washington's human rights standards":

Երբ Գլիթսոն Գոլումպիոյ վարչակարգը կը նկատէ «առաջնորդող դեմոկրատիա», իսկ Փաուել կը վճռէ թէ՛ «Գոլումպիա կը լրացնէ Ուաշինկթոնի մարդու իրաւանց չափանիշերը»... անոնք ականայ խոստովանած չե՞ն ըլլար, որ ամերիկեան իմփերիալիզմը կը լրացնէ Ֆրանչիսկոս Ա. Պապի բնութագրած «արդի ստրկատիրութեան» չափանիշերը...:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

28 Յուլիս 2019

## Տեսակէտ

### "WHY DO THEY HATE US, WHEN WE'RE SO GOOD?"



«Որովհետեւ՝ ձեզ ատողները, արաբ ժողովուրդներս ենք, ոչ՝ իշխանաւորները: Քանի որ մենք մասնայատուկ պատճառ մը չենք տեսներ, որ մեր շրջանի հարստութիւնը պէտք է հոսի դէպի Արեւմուտք, եւ՝ դէպի այն դրամատեր մահմետականները, որոնք կապուած են Արեւմուտքին»

ԱՐԱՐ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐ

Մեր Նախորդ գրութեան մէջ անդրադարձած էինք Նօամ Չոմսքիի հանգրուանային գիրքի երկրորդ մասին, որ լոյս տեսած էր անոր ծննդեան 75-ամեակին առիթով, որուն խորագիրն էր «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱՐԵԿՉՈՒԹԻՒՆ, ՅԵՏ 9/11-ԵԱՆ ԽՕՍՔԵՐ ԵՒ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ»:

Ներկայ գրութիւնը պիտի անդրադառնայ գիրքի երրորդ մասի երեք բանախօսութիւն-տեսակցութիւններուն:

Բանախօսութիւնը ամփոփուած է վերի խորագրին տակ, որ կը պատասխանէ Որդի Պուշի «մանկամիտ» հարցումին: Աւելի ճիշդը՝ նենգամիտ հարցում, հետեւանք՝ ինքնասիրահարութեան, Նարկիզականութեան... եւ անհեթեթութեան:

ԱՄՆ-ի մեծութեամբ հսկայ իշխանութեան Նախագահը կրնա՞յ «մանկամիտ» հարցումներ տալ: Այո՝ կրնայ, եթէ ան Որդի Պուշն է, որ առանց այլայլելու կ'ըսեր թէ՛ ինք իր վարած քաղաքականութեան համար կը խօսեր «Աստուծոյ» հետ եւ ըստ այն կը գործեր... բայց՝ անոր «Աստուած»ը ԱՄՆ-ի ռազմական արդիւնաբերութեան կորիլլաներն էին, եւ ինք անոնց Չիթթան... Նստած անոնց գիրկը... ինչպէս գծած էր տաղանդաւոր երգիծանկարիչ մը...: ԱՄՆ-ի ռազմական արդիւնաբերութեան ֆինանսատերները՝ Պաշտպանութեան Նախարարութեան մէջ նստած, Փենթակոնին տուած են երկրի «խորքային իշխանութեան» տարողութիւն: Նախորդող գրութեան մէջ տեսանք "Pentagone System"ի դրութիւնը, որ «գտարիւն» վայրի դրամատիրական երկրին մէջ, որ վճռականօրէն կը մերժէ տնտեսական շուկային մէջ պետութեան միջամտութեան «գտարիւն» սոցիալիստական կանոնը, Փենթակոնին կ'արտօներ՝ փոխանորդաբար պետութեան, միջամտել երկրի տնտեսական շուկային մէջ, կարենալ յաղթահարելու համար դրամատիրութեան կառուցուածքային ճզնաժամին յարուցած դժուարութիւնները...: Քանի որ՝ Սովետ Միութեան ինքնալուծարումով, ամերիկեան իմփերիալիզմի վարձկան ճրճան ճպուռը՝ Ֆրանսիս Ֆոլքոյաման, կը գուժեր սոցիալիզմի վերջնական պարտութիւնը եւ պատմութեան զարգացման կանգ առնելը կ'աւետեր՝ դրամատիրութեան վերջնական յաղթանակը, որպէս կատարելագոյն հասարակարգ...: Ուրեմն, պատմութիւնը հասած էր իր վախճանին, վախճանական Նպատակին, վայրի դրամատիրութեան:

Չոմսքի այս բանախօսութիւնը կարդացած է 22 Մարտ 2002 թուին, Գալիֆորնիա Նահանգի Փալօ Ալթօ քաղաքի «Խաղաղութիւն եւ Արդարութիւն Կեդրոն»ին մէջ, ուր յայտնօրէն տիրած է





համակիրներու հարազատ ու ջերմ մթնոլորտ մը, որ իրեն չէ ստիպած կրկնութիւններով երկարել:

Որդի ճորճ Պուշի հարցումի ձեւով արտայայտած գանգատին Չոմսքիի պատասխանը կ'ամփոփենք ստորեւ:

11 Սեպտեմբերէն յետոյ, մամուլի որոշ օրկաններ, մասնաւորաբար "Wall Street Journal", ըրին այն ինչ որ հարկ էր որ ըրած ըլլան: Անոնք սկսան Միջին Արեւելքի շրջանին մէջ հանրային կարծիքի հարցախոյզը կատարել: Անոնք կը փորձէին գտնել պատասխանը ճորճ Պուշի գանգատող հարցումին, թէ՛ անոնք ինչպէս կրնան ատել մեզ, երբ այսքան լաւ ենք: Ինչպէս կրնայ ասանկ բան կատարուիլ:

Իրականութեան մէջ, Նախագահի հարցումէն առաջ իսկ, "Wall Street Journal"ը հայթայթած էր պատասխաններէն մի քանին: Անոնք շրջանին մէջ հարցախոյզը կեդրոնացուցած էին իրենց համար կարեւոր նկատած մարդոց շրջանակին վրայ. այսինքն՝ «դրամ ունեցող իսլամներու» (դրամատուներու տերերու, փաստաբաններու, Միացեալ Նահանգներու անդրազգային ընկերութիւններու ճիւղերու տնօրէններու), այնպիսի մարդոց, որոնք արդէն ներգրաւուած են Միացեալ Նահանգներու շրջագիծէն ներս, եւ անշուշտ կ'ատեն Պին Լատէնը...:

Մերձաւորներու այս խումբին պատկանողները ինչ կարծիք ունէին Միացեալ Նահանգներու քաղաքական եւ տնտեսական քաղաքականութեանց մասին: Բանից դուրս եկաւ, որ այս խումբին ալ կեցուածքը շատ թշնամական է ԱՄՆ-ի վարած քաղաքականութեան նկատմամբ: Բայց ամէնէն ակնյի առարկելին՝ անոնց համար ԱՄՆ-ի հետեւողականօրէն ցուցաբերած ընդդիմութիւնն է արաբ երկիրներու դեմոկրատականացումին եւ անկախ զարգացումին, եւ միշտ՝ անոր նեցակցութիւնն է այս երկիրներու ապականած ու բիրտ վարչակարգերուն: Բնականաբար ալ՝ անոնք ուժգնօրէն դէմ են ԱՄՆ-ի միակողմանի նեցուկին՝ Իսրայէլի զինեալ բռնագրաւումներուն, որոնք խիստ կոշտ են եւ բիրտ, որ հիմա արդէն բռնագրաւումներուն 35-րդ տարին է (1962): Անոնք նաեւ ուժգնօրէն կ'ընդդիմանան Իրաքի դէմ առնուած պատժամիջոցներուն՝ լրիւ ու կատարելապէս հասկնալով հանդերձ այդ պատժամիջոցները, որովհետեւ՝ այդ բոլորը կը քանդեն երկիրն ու ժողովուրդը՝ զօրացնելով Սատտամ Յիւսէյնի բռնատիրութիւնը:

Անոնք նաեւ կը յիշեն ուրիշ բան մըն ալ, զոր մենք կ'ուզենք մոռացութեան տալ... որ Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա պաշտպանեցին Սատտամ Յիւսէյնը, անոր ամէնէն յոռի վայրագութիւնները, քիւրտերու կազախեղդամահացումը եւ միւս արարքները, եւ շարունակեցին օգնել իրեն արտադրելու՝ զանգուածային բնաջնջումի զենքեր: Այսքանը բաւարար պատասխան մըն է ճորճ Պուշին, մարդոց կողմէ, որոնք իրենք զիրենք կը նկատեն ԱՄՆ-ի սիստեմի շրջագիծին կեդրոնը գտնուող: Այսքանը արդէն շատ լուրջ պատասխան մըն է Պուշին, հիմնովին տարբեր ամերիկեան մամուլին հարիւրներով լոյս տեսած պատասխաններէն, որոնք Միջին Արեւելքի շրջանի ժողովուրդը յետամսաց կ'որակեն, անկարող կը նկատեն գնահատելու մեր ունեցած ազատութեան աստիճանը, «վատ մշակոյթներ» ունին կը կարծեն, եւ շարք մը սոփեստութիւններ կ'ըսեն, թէ՛ անոնք դուրս մնացած են համաշխարհայնացումէն, կը Նախանձին մեր ազատութիւններուն վրայ, մեր սքանչելիքներուն վրայ, այսինչին եւ այնինչին վրայ...: Այս բոլոր սոփեստութիւնները հինգած են եւ ժամանցուած: Նկատի պէտք է ունենալ, որ 1958 թուականը Միջին Արեւելքի պատմութեան մէջ, Միացեալ Նահանգներու միջազգային հարցերուն համար եղաւ՝ բախտորոշ, ճակատագրական թուական մը: Այդ տարին, շրջանի



երկիրներէն մէկը, անունը Իրաք, կարողացաւ դուրս գալ, պոկուիլ՝ անկլօ-ամերիկեան condominium-էն (միացեալ իշխանութենէն...), զոր անոնք պարտադրած էին աշխարհի ուժանիւթի աղբիւրներուն վրայ: Անցեալին, Իրանի մէջ ազգայնական-պահպանողական ռեժիմ մը՝ փորձած էր նոյնը ընել, բայց ԱՄՆ-Քրիտանիա պետական հարուածով մը տապալեց այդ ռեժիմը:

Իրաք իրապէս փշրեց այդ condominium-ի շղթան եւ շրջանին մէջ զօրահաւաքի մեծ իրարանցում մը տեղի ունեցաւ...: Ապտեյ-Գերիմ Քասեմի զինուորական յեղաշրջումով տապալուած էր Նուրի Սայիտի անկլօ-ամերիկեան բռնատիրութիւնը, եւ՝ Իրաքի արաբական քարիւղը ազատագրուած օտար լուծի շղթաներէն: (1958 թուի Յուլիսին, նոյնիսկ Պէյրութի ծովափին խարսխեց ամերիկեան 6-րդ օդանաւակիր նաւատորմիդը, քանի որ Իրաքի յեղաշրջումը քանդած էր ամերիկեան իմփերիալիզմի «Պաղտատի Ուխտ»ը, ընդմէջ՝ Թուրքիոյ, Իրաքի եւ Յորդանանի... որ ուղղուած էր Սովետ Միութեան դէմ):

Նախագահ Այզընհաուեր, իր աշխատակազմին հետ դռնփակ նիստի մը ընթացքին, ըսաւ. «Մեր դէմ ատելութեան արշաւ մը կայ [Արաբական աշխարհին մէջ], ոչ թէ կառավարութեանց, այլ՝ ժողովուրդին կողմէ»: Այս մասին կարծիքներու փոխանակութիւն եղաւ: Ազգային Անվտանգութեան Խորհուրդը պարզեց իր վերլուծումը, թէ՛ շրջանին մէջ գոյութիւն ունի ընկալում մը, որ Միացեալ Նահանգները զօրավիգ կը կանգնին կոշտ, բիրտ եւ ապականած ռեժիմներուն, եւ այդպիսով կը փակեն երկրի ճանապարհը դէպի դեմոկրատականացում եւ տնտեսական բարգաւաճում, որովհետեւ անոնք (այսինքն մենք) կ'ուզեն պահպանել մեր շահերը, վերահսկելով շրջանի քարիւղի պաշարներուն վրայ: Միաժամանակ ըսելով թէ այս ընկալումին կարելի չէ հակաճարել, որովհետեւ ճշգրիտ է:

Հարկաւ ժողովուրդին մօտ գոյութիւն ունի ակելի խոր դժգոհութիւն մը, քանի որ ոչ մէկ մասնաշատուկ պատճառ մը կը տեսնեն, որ իրենց շրջանի հարստութիւնը պէտք է հոսի Արեւմուտք եւ «դրամ ունեցող իսլամներ»ը, որոնք կը գործակցին Արեւմուտքին հետ, եւ ոչ թէ հոսի՝ դէպի մեզ...: Բայց կայ շատ ակելի խոր դժգոհութիւն մը եւ ատելութիւն մը այն արաբներուն մօտ, որոնք կը գործակցին Արեւմուտքին հետ, սակայն իսլամ չեն, եւ չեն օգտուիր... իսլամներուն նման:

Չոմսքի բանախօսութիւնը կ'եզրափակէ հետեւեալ բառերով.

Բայց ոչ թէ Միջին Արեւելքի, այլ աշխարհի բոլոր ծագերուն վրայ ապրող ժողովուրդ մը, դժգոհ կը մնայ ինքզինք ճգմուած տեսելով ուրիշի մը կօշիկին տակ: Չի կրնար ընդունիլ այդ, որ ատելութիւն կը ստեղծէ:

•••

ԱՄԵՐԻԿԱ-ԻՍՐԱՅԷԼ – Ո՞Ր ԿՈՂՄԸ ԿԸ ՉԻՋԻ ՄԻԲՄԻՆ

Շատեր կը կարծեն թէ՛ այս հարցումը անլուծելի է, ճիշտ այն հարցումին նման, թէ՛ հա՞րը հակկիթէն, թէ՛՞ հակկիթը հաւէն կը ծնի:

Իսրայել կոչուած սիոնական պետութիւնը տարատնկեալ պետութիւն մըն է, տարատնկեալ Թուրքիոյ նման: Այս երկու պետութիւններուն բնակիչները՝ ամբողջութեամբ բնիկները չեն այս երկիրներուն: Պետութիւններ գոյութիւն առած են՝ ծաւալողական պատերազմներու միջոցով եւ հաստատուած են բնիկ ժողովուրդներու արեան ու ոսկորներուն վրայ, տարածաշրջանին մէջ



Ծառայելու համար Արեւմուտքի իմփերիալիստ տերութիւններու շահերուն, ի վնաս՝ բնիկ ժողովուրդներու շահերուն: Երբ դադրին իրենց տերերու շահերուն ծառայել, կը կորսնցնեն իրենց գոյութեան իրաւունքը...:

Ասիկա՝ տողերուս հեղինակին համեստ կարծիքով եւ հաստատ համոզումով:

Յիմա տեսնե՞ք, թէ՛ ականաւոր հրեայ լեզուաբան Չոմսքի ինչ կ'ըսէ այս մասին, իր գրոյցներէն մէկուն մէջ:

Չոուցակիցը երբ Չոմսքիին կ'ըսէ թէ իրեն կը թուի թէ Գլինթոն կ'ուզէ յառաջխաղացք մը տալ Միջին Արեւելքի մայուն խաղաղութեան խնդրին, ընդունելի լուծում մը առաջարկելով իսրայելեան եւ պաղեստինեան կողմերուն, Չոմսքի կը պատասխանէ.

Գլինթոնի նպատակը ընդունելի եւ խաղաղ բանակցութեան ճամբով լուծում մը բերել չէ, այլ՝ պաղեստինեան հարցին թաղումը: Որովհետեւ՝ Իսրայել գինուորական խարիսխն է Միացեալ Նահանգներուն, եւ ուրեմն՝ եղեր է եւ մէկն է այն երկիրներէն, ինչպէս Թուրքիան, որոնք Միջին Արեւելքին կը վերահսկեն գինուորականօրէն, ի նպաստ Միացեալ Նահանգներու շահերուն: Եւ՝ պաղեստինցիները ոչինչ ունին հրամցելիք: Անոնք չունին ոչ մէկ ներուժ, ոչ մէկ հարստութիւն, եւ հետեւաբար՝ չունին ոչ մէկ իրաւունք... իմփերիալիզմին ակնոցով:

Իսրայել Միացեալ Նահանգներու ծովափէն անդին գտնուող (offshore) գինուորական ուժի խարիսխ մըն է: Եթէ ատիկա դադրի այդպիսին ըլլալէ, Միացեալ Նահանգները զայն կը թափեն ծովը՝ ուրիշներու հետ միասին: Բայց այնքան ատեն, որ Իսրայել ամերիկեան գինուժի օժֆշօր խարիսխը կը մնայ, ամերիկացիները կ'ընեն ինչ որ իրենք կ'ուզեն:

Դուն կը խօսիս Գլինթոնի կողմէ պաղեստինեան պետութեան համար գծուած քարտեզին մասին: Դուն տեսա՞ծ ես այդպիսի քարտեզ: Ամբողջ ամերիկեան մամուլին մէջ լոյս չտեսաւ այդպիսի քարտեզ մը, որովհետեւ՝ երբ մէկը ակնարկ մը նետէ այդ քարտեզին վրայ, իրեն ակնբախ կը դառնայ ամբողջ կեղծիքը: Այդ քարտեզին մէջ՝ Արեւմտեան ափը կոտորակուած է իրարմէ անջատուած չորս քանթոններու: Կազան Նոյնպէս, իսկ Արեւելեան Երուսաղէմը մեկուսի անջատ քանթոն մըն է: Ահա թէ ինչու ամերիկացիները ոչ մէկ քարտեզ հրատարակեցին...:

Աւելին.1970 թուի ՍԵԱ Սեպտեմբերի օրերուն, երբ Յորդանանի թագաւորը որոշեց ջարդել պաղեստինցիները, Իսրայելէն պահանջեցին գինուորական կեդրոնացումներ կատարել Սուրիոյ սահմանագիծին երկայնքին, որպէսզի Սուրիա չհամարձակի միջամտել եւ արգիլել ջարդը...: (Իսկ ամերիկեւսիոնական իմփերիալիզմը ինք դրդեց Յորդանանի թագաւորը՝ ջարդելու իր հողին վրայ հաստատուած պաղեստինցիները, մէկ կողմէ՝ պաղեստինցիներուն թելադրելով որ Յորդանանը ընդունին իբր իրենց «հայրենիք»... միւս կողմէ՝ թագաւորին յուշեցին թէ պաղեստինցիները կ'ուզեն Յորդանանի մէջ իշխանութիւնը գրաւել: Նոյնպիսի սուտ մըն ալ անոնք հաղորդեցին Լիբանանի պատասխանատուներուն եւ քրիստոնեայ ֆաշական միլիշիաներուն, քաղաքացիական պատերազմին սկիզբը...):

Ամերիկեան օգնութիւնը Իսրայելի քառապատկուեցաւ, նաեւ անոր համար, որ 1967-ին Իսրայել պարտութեան մատնեց արաբներու հերոսը՝ Կամալ Ապտելնասերը... եւ եգիպտական թերթ մը իր մանշէթին վրայ գրեց. «Չարիքի Առանցքը՝ Ամերիկեան, Իսրայել եւ Թուրքիա...»: ԱՄՆ-ի աչքին՝ պաղեստինցիներու արժէքը Ռուանտայի ժողովուրդին արժէքէն աւելի չէ: Ան Նոյնիսկ ծրագրած



Եր պաղեստինցիներուն հայրենիք մը ստեղծել Սոււտական Արաբիոյ անմարդաբնակ շրջաններուն մէջ...:

Տողերուս հեղինակը տասնամեակներ ամբողջ գրած է ամենա-անսուրբ երրորդութեան մասին. երեք տարատնկեալ պետութիւններու՝ ԱՄՆ-ի, Թուրքիոյ եւ Իսրայէլի մասին, այս երեքին իմփերիալիստական ամուսնական դաշինքին անբակտելիութեան մասին, բացի այն պարագային՝ երբ ԱՄՆ դադրի իմփերիալիստական ըլլալէ, Թուրքիա դադրի փանթուրքիստ ըլլալէ եւ Իսրայէլ դադրի սիոնական ըլլալէ... Որովհետեւ՝ Յայ եւ Արաբ ժողովուրդներու բուն թշնամիներն են Արեւմուտքի իմփերիալիստները, որոնք հովանաւորած են Փանթուրքիզմը եւ Սիոնիզմը: Թուրք, ամերիկացի կամ հրեայ պարզ ժողովուրդները չեն թշնամիները, ոչ ալ՝ հակա-փանթուրք թուրքերը կամ հակա-սիոնական հրեաները... որոնք կ'ըսեն թէ՛ Իսրայէլը իրենց խոստացուած անտեսաց երկիրը չէ: Հակա-սիոնական հրեայ պատմաբան, Թել Ավիվի համալսարանի Պատմութեան Ամպիոնի դասախօս Փրոֆ. Շլոմօ Սանտ (Prof. Shlomo Sand) իր ակադեմական 650 էջանի երկասիրութեան մէջ հին վաւերաթուղթերով կը փաստէ թէ՛ գոյութիւն ունի միայն Մովսիսական կրօն մը եւ ոչ թէ «Հրեայ» ժողովուրդ կամ ազգ: Փարիզի Ֆլամմարիոն Հրատարակչատունէն, 2002 թուին լոյս տեսած իր այս հատորը ունի հետեւեալ շատ խօսուն եւ յստակ վերնագիրը՝ "Comment fût Inventé le Peuple Juif?" (Ի՞նչպէս հնարուեցայ հրեայ ժողովուրդը):

• • •

Այս երրորդ մասի երրորդ գրոյցը տեղի ունեցաւ 19 Մարտ 2002 թուին, Գալիֆորնիոյ Պերքըլի քաղաքի համալսարանի «Ի սնդիր Պաղեստինի մէջ Արդարութեան» ուսանողական խումբին հրաւերով:

Ուսանողներու հարցումը. «Ի՞նչպէս կը բացատրէք վերջին դիմաշրջումը Միացեալ Նահանգներու՝ Պաղեստինի կողքին կանգնելու եւ պաղեստինեան պետութեան մը հաւանական ստեղծումին ուղղութեամբ»:

Չոմսքիի պատասխանը.

Ամերիկեան քաղաքականութեան մէջ մէկ դիմաշրջում գոյութիւն ունի: Կատարուածը ամբողջական զոաբանութիւն է: Եղածը այն է, որ Տիք Չենսի Միջին Արեւելքի մէջ կը շրջագայի, որպէսզի նեցուկ ապահովէ Իրաքի դէմ մղուելիք յառաջիկայ պատերազմին, որ շատ դժուար հարց մըն է, որովհետեւ ոչ ոք համաձայն է ատոր: Իրականութեան մէջ՝ մարդոց մեծամասնութիւնը կ'ատէ այդ պատերազմը:

Եւ քանի որ ամէն մարդ գիտէ, որ Իսրայէլի շարժումները իրահանգուած են, կամ՝ քաջալերուած Միացեալ Նահանգներուն կողմէ, ամերիկեան կառավարութիւնը, այս օրերուն, Իսրայէլէն պահանջեց ցահալի թանքերը դուրս բերել Ռամալլայէն եւ միւս պաղեստինեան շրջաններէն:

Որովհետեւ՝ մարդիկ քաջ գիտեն, որ երբ կ'ըսուի իսրայէլեան թանքեր, իսրայէլեան ուղղաթիռներ կամ օդանաւեր, այդ խօսքերը պէտք է թարգմանուին՝ ամերիկեան թանքերու, ամերիկեան ուղղաթիռներու եւ ամերիկեան օդանաւերու, հակառակ անոր, որ զանոնք վարողները իսրայէլացիներ են: Քանի որ այդ զինամիջոցները պիտի գործածուին բացառաբար՝ ամերիկեան նպատակները իրականացնելու համար:



Իսրայելը ամերիկեան զինուժի օժգոր խարխսին Է եւ անոր բոլոր շարժումները՝ կը կրկնեմ, հրահանգուած կամ քաջալերուած են Ամերիկայի կողմէ: Եւ եթէ Իսրայելը՝ Նոյնիսկ մէկ միլիմետր աւելին երթայ... հանդարտ ծայն մը անոր կ'ըսէ. «Ալ կը բաւէ»: Եւ Իսրայել ետ կը քաշուի: Նոյն այս բանը մենք տեսանք երկու օրեր առաջ, երբ այդ կակուղ ծայնը Ուաշինկթընէն եկաւ ըսելու. «Պաղեստինցիներու հողերէն դուրս քաշեցէք թանքերն ու զինեալ ուժերը, որովհետեւ՝ ատոնք կը խանգարեն Տիբ Զեննիի առաքելութիւնը»: Եւ՝ վայրկենապէս ատոնք քաշուեցան: Վայրկենապէս՝ որովհետեւ այդ Է խաղին օրէնքը մաֆիաներու մօտ: Երբ "Don"ը (մաֆիայի աւագակապետը, պարագլուխը) հրամայէ, ենթական կը հնազանդի...: Այս Է որ եղաւ բազմաթիւ անգամներ: Ուրեմն, երբ մարդիկ խօսին իսրայելեան վայրագութեանց կամ թրքական վայրագութեանց մասին, անոնք պարտին ըսել՝ ամերիկեան վայրագութիւններ, որովհետեւ՝ հրահանգները կու գան ԱՄՆ-էն...: Նոյնն Է այսօր Գոլումպիոյ պարագան:

Այսպիսով, պարզուեցան Նօամ Զոմբիի բացորոշ դատումները եւ շեշտակի պատասխանները՝ երեք քաղաքական հիմնահարցերու.

- 1) Միջին Արեւելքի արաբ ժողովուրդները ի՞նչու կ'ատեն ամերիկեան իմփերիալիզմը,
- 2) թէ ով կը տիրապետէ միւսին՝ ԱՄՆ-ը թէ՞ Իսրայելը..., եւ
- 3) թէ ամերիկեան իմփերիալիզմը եւ սիոնիզմը կ'ուզեն թաղել պաղեստինեան դատը, քանի որ Իսրայել (ինչպէս՝ Թուրքիա) ամերիկեան իմփերիալիզմի զինուժին օժգոր խարխսներն են Միջին Արեւելքի մէջ...

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

4 Օգոստոս 2019

## Տեսակէտ

### ՉԶԵՏԵՒԻԼ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ-ՏՊԱՒՈՐԻՉԻ ՇԱՌԻ(SHOW)-Ի, ԽՕՍԻԼ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

#### Յ. Պալեան



Ուշադրութիւն գրաւելու, մրցակցութեան, տպաւորելու եւ մարդորսութեան համար սովորական են ցուցադրական-տպաւորիչ (շաու–show) նախաձեռնութիւնները, որոնք տուրք կու տան անմիջականի, վնասակար չեն, բայց ապագայակէ՞րտ են, ի՞նչ ձեւով կը նպաստեն մեր ժողովուրդի հիմնահարցերու լուծման, Հայաստան եւ սփիւռք(ներ): Վնասակար չեն, բայց օգտակա՞ր են:

Նորութիւն չէ ինչ որ պիտի ըսեմ, շատեր գիտեն, բայց չենք խօսիր, մեր անզօրութիւնը խոստովանելով կամ տուրք տալով չխրտչեցնելու անմակարդակ քաղաքականութեան: Թիւր ըմբռնում պէտք չէ ունենալ: Դեմ ըլլալ կղզիացման (կերթօ) չի նշանակեր ինքնութիւն խաթարել կամ կորսնցնել: Պարտաւոր ենք ապրիլ մեր հեռու եւ մօտ շրջապատին հետ, բայց ապրիլ առանց անձնատուութեան, այսինքն՝ այլասերման, մերժելով անոր առաջնորդող

յաջորդական շղթայ կազմող նահանջները, զորս կը կոչենք պատշաճեցում եւ լաւ ապրելու իրաւունք:

Մեր ժողովուրդը տոկալու եւ տեւելու խնդիր ունի, մեր փոխարէն ուրիշը լուծում պիտի չբերէ այս խնդրին, մեզմէ ոչ ոք ինքզինք բացառութիւն համարելու բարոյական իրաւունք ունի: Տոկալու եւ տեւելու խնդիրը կը լուծենք հաւաքաբար, կամ չենք տոկար եւ չենք տեւեր, կ'անհետանանք: Տոկալու եւ տեւելու համար անհրաժեշտ եւ անշրջանցելի պայմաններ կան, առաջին հերթին տեր մնալով արժեքներուն հաւաքաբա՛ր, տուրք չտալով եսի բացառութեան եւ անհատականին: Պարզ. հայու ինքնութիւնը եւ անոր մարդկային լիակատար իրաւունքները կը պահանջեն յանձնառութիւն:

Այդ անհրաժեշտ եւ անշրջանցելի պայմանները պէտք է ընդունիլ բարձրամակարդակ գիտակցութեամբ, զանոնք չհամարելով նախնական, յետադիմական, տիրացուական, ժամանակավրէպ:

Հողը տեր կ'ուզէ: Կարելի չէ հողին տեր ըլլալ հեռուն նստելով կամ հեռանալով, այսինքն հայրենատիրութիւնը կը պահանջէ ներկայութիւն: Այսինքն չլքել հողը եւ վերադառնալ. արտագաղթը աղէտ է ազգին եւ հայրենիքին համար, նոյնքան աղէտ է ազգին եւ հայրենիքին համար հայրենադարձութեան յանձնառութեան բացակայութիւնը, ինչ ալ ըլլան անոր ճապկումներով եղած արդարացումները:



Յայրենատիրութիւնը կը դառնայ դատարկաբանութիւն երբ կը փոխարինուի թութակային հայրենասիրութեամբ, զգացումով կամ ծագումով հայու փուչիկով:

Նոյնքան աղիտալի է հայրենադարձութիւնը խոչնդոտել վարչական-դիւանակալական տաղտուկներով, կամ հայրենադարձողը դիտել որպէս առաւել կամ նուազ օտար:

Ազգը նկարագիր կ'ուզէ: Ծագումով հայ (d'origine arménienne), զգացումով հայ, կէս հայ, քառորդ հայ լեզուագարութիւններ են, որոնք կը նմանին շեղբի վրայ քալելու: Ի՞նչ կը նշանակեն նման բացատրութիւններ, ի՞նչ ընելու եւ ո՞ր հասնելու կը ծառայեն: Ի՞նչ յանձնառութիւն ունին անոնք ինչ կը վերաբերի սեփական երկրի պաշտպանութեան, սեփական դիմագիծի պահպանման, սեփական ինքնութեան ստորոգելիներու:

Ինչպէ՞ս կ'ապրուի ազգի իրաւ անդամութիւնը: Պէտք է գիտնալ տարբերութիւնը ազգի եւ համայնքի: Ազգի աւելի քան կէսը այս անորոշութեան ովկիանոսին վրայ կը ծփայ: Յամայնքը, ինչ ալ ըլլան խօսքի ճապկումները, սեփական երկրէն դուրս, աւելի մեծ ամբողջի մը մէջ, առանձնաձ հաւաքականութիւն մըն է, ժամանակի ընթացքին, մերուելով, կ'ըլլայ նուազ առանձնացած, զիջելով իր ինքնուրոյնութեան յատկանիշները. լեզուական, կրօնական, բարբերու եւ երբեմն նոյնիսկ գոյնի, դառնալով իրապէս ծագումով միայն տարբեր, եւ այդ ալ օր մը կը մոռցուի: Ազգի անդամութիւնը, ի հարկէ, կ'ապրուի սեփական հայրենիքի մէջ, ուր ապրած են նախահայրերը եւ պէտք է ապրին յաջորդները: Յայրենիքէն դուրս, որքան որ ալ պահած ըլլանք ազգի յատկանշական արժէքները եւ յանձնառութիւնները, հաւաքականութիւնները համայնք են, լեզուական, կրօնական, գոյնի եւ ծագման: Յամարկումը (intégration) ուշ կամ կանուխ պիտի յանգի ձուլման (assimilation): Ժամանակի հարց է: Յետեւաբար՝ հայրենիք պահել, հայրենիք չլքել, չարտագաղթել եւ հայրենադարձութիւն անցագիր են ազգի անդամութեան, այսօրուան եւ վաղուան համար:

Ազգը նաեւ մարդոց համրանք է,- ոչ խմբակցութիւն է, ոչ միութիւն, ոչ ակումբ,- ընկերութիւն՝ իր բոլոր խաւերով, գիտնականներով եւ արհեստաւորներով, դատաւորներով եւ աւագակներով, արուեստագետներով եւ մարզիկներով, հարուստներով եւ աղքատներով: Առանց համրանքի ներկայութեան, հայրենիքը կ'ըլլայ անապատ, կու գան նոր տէրեր: Այս տարրական ճշմարտութիւնը պէտք է ըմբռնել, երբ ներսն ենք եւ կ'ուզենք դուրս ելլել, երբ դուրսն ենք եւ այդ կացութիւնը մնայուն կը համարենք:

Յամրանքը այդքան է միայն, մարդոց գումար, որուն անդամները կրնան ունենալ զանազան համոզումներ, գիտութիւն եւ որակ, բայց ազգ ըլլալու համար ան պէտք ունի ազգային որակի՝ անկախաբար գիտութենէն եւ ընդհանրապէս որակէն, որոնց վրայ ան պէտք է գումարուի: Այդ ազգային որակը այլ տեղ եւ ուրիշներու մօտ չի գտնուիր, ան էապէս ինքնուրոյն է եւ ինքնուրոյնութիւն: Ամերիկեան, ֆրանսական կամ ռուսական համալսարաններէ չի ստացուիր ան, ան սեփական լեզու է, որուն հետ կու գան գաղափարներ (héritage de mots, héritage d'idées կ'ըսէր ֆրանսացի իմաստասէր Լեոն Պրեօնշվիկ), պատմութիւն է, ազգային դիցաբանութիւն-հերոսապատում է (Յայաստան կ'ըսեն Էպոս), ինչպէս Սասունցի Դաւիթը: Ազգային որակը պատմութիւն է (ոչ անպայման պատմագիտութիւն), գէթ այնքան՝ որ մարդ կարենայ ըսել որ ինք ֆրանսացի, անգլիացի, արաբ, չինացի կամ թուրք չէ:

Ազգի անդամութիւնը գոյութենական որակի վրայ գումարուող յանձնառութիւն է, այսինքն՝ ստանձնել տարբեր ըլլալու իրաւունքը, ոչ գերադաս, ոչ ստորադաս, այլ՝ ինքնուրոյն: Երկրին մէջ



Եւ երկրէն դուրս այլոց նմանելու ախտաւոր բարդոյթի յաղթահարումով կը սկսի այս յանձնառութիւնը:

Այս գիտակցութիւնն է, որ հայ գրողին (Վիգէն Խեչումեան) ըսել կու տայ, որ օտարի դրանը թեզ կը կոչեն հիւր, որպէսզի չասեն ծառայ: Այս իմաստութիւնը օտարին քով օտարէն աւելի փայլուն ըլլալու ինքնացուցադրութիւն չէ (շառ), այլ ինքնութեամբ, հարազատութեամբ եւ տարբերութեամբ ըլլալ եւ տեսել:

Չայրենիքէ դուրս, մեր պարագային մասնաւորաբար, երբ վերածուած ենք սփիւռք(ներ)ի, ազգի մեր անդամութիւնը, ինչ ալ ըլլայ մեր որակը, ժամանակաւորի կնիք ունի: Ան կրնայ դեռ ժամանակ մըն ալ դիմանալ հայասիրութեամբ, հայրենասիրութեամբ, մշակութասիրութեամբ եւ հայաստանեան զբօսաշրջութեամբ, բայց իսկապէս տոկալու եւ տեսելու ռազմավարութիւնը, մարտավարութիւնը եւ հեռանկարը (stratégie, tactique, projet) կը բնորոշուի հայրենատիրութեամբ, որուն առանցքին կը գտնուի հայրենադարձութիւնը, որպէսզի ազգի անդամները միասնաբար դիմաւորեն սպառնացող վտանգները եւ իրենց ինքնուրոյնութեամբ մասն պատմութեան բեմին վրայ:

Եւ ի հարկէ, այս բոլոր խօսքերը փունճ են, եթէ բացակայի յանձնառութիւնը: Չայրենադարձութիւն, հայրենատիրութիւն, հայրենիքի ամբողջացում, համրանքի անվտանգութիւն եւ աճ, պատմութեան գիտակցութիւն (ոչ որպէս սոսկ գիտութիւն, օտարներ կան որոնք մեզմէ լաւ գիտեն մեր պատմութիւնը), հայախօսութիւն, լեզուի եւ մշակոյթի պաշտպանութիւն, հաւասարապէս կը պահանջեն յանձնառութիւն:

Ղեկավարութիւններու պարտականութիւնն է առաջանորդել այս համագումար յանձնառութիւնը, այսօ՛ր, ինչ ալ եղած ըլլան եւ ըլլան գործի ընթացքին յայտնուած տարբերութիւնները:

Յաջողելու ուժը մենք պիտի ըլլանք: Ոչ ոք յաջողութիւնը ափսէի վրայ դրած մեզի պիտի հրամցնէ:

Չասկնալ՝ որ Նոյնիսկ եթէ թերահաւատներ կան, անհատաբար եւ հաւաքաբար պատասխանատու ենք եւ պարտաւոր ենք ըլլալ յանձնառու, կրկնենք, մնալու համար պատմութեան բեմին վրայ, որպէս ինքնուրոյն եւ ազատ ժողովուրդ:

Առանց ճապկումներու ըլլալ հարազատ յաջորդները անոնց՝ որոնք իրենց խօսքով եւ գործով ազգ պահած են եւ վերականգնիլ:

Մտածել, հետեւելով ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանի հզօր խօսքին, որ «Չայաստանի վերջին մայրաքաղաքէն առաջին մայրաքաղաք»ի հեռաւորութիւնը օդանաւով երեսուն երկու վայրկեան է, երեսուն երկու րոպէ...

Առաջին մայրաքաղաք Վանի բերդը...

Խուճապի չմատնուիլ, չըլլալ փարիա, եւ մնալ պատմութեան մեջ:

Օր մըն ալ, առանց վերլուծական-տեսաբանական խուսանաւումներու, պէտք է խօսիլ «հզօր սփիւռք»ի եւ «սփիւռքի հզօրացման վախճանական նպատակի (finalité) մասին. ինչո՞ւ, ինչպէ՞ս, մինչեւ ե՞րբ:





Լռեցնել զուռնաները եւ մտածել՝ ազգի եւ հայրենիքի լինելութեան ըմբռնումով:

Յ. Պալեան

## Տեսակէտ

### Սփիւռքի նախարարութիւն իր բովանդակ իմաստով մշակութային, իրաւական եւ քաղաքական կառոյց

#### Նուարդ Մատոյեան-Տարագճեան



Սփիւռք հասկացողութիւնը տարբեր ըմբռնում եւ տարբեր իմաստ ունի մեզի հայերուս համար: Ունինք սփիւռքացած ժողովուրդ, որ բռնի ոյժով գրկուեցաւ իր հայրենի հողէն: Եւ որուն խոհերուն եւ մտածումներուն մէջ կ'ապրի իր անժամանցելի իրաւունքներուն պահանջատիրութեան հարցը:

Միթէ կա՞յ սփիւռքահայ մը, որ չցանկայ իր հայրենի հողին վրայ բռնագաղթուած հայութեան գոյութեան փաստը ընկալուի պետական մակարդակով: Այս մտածումները կ'արթննային մեր մէջ, երբ կը լուծարուէր Սփիւռքի Նախարարութիւնը:

Սփւռքը իր ընդհանուր պարունակին մէջ, կ'ընդգրկէ նաեւ՝ Հայրենիքէն կամովին հեռացած, եւ նախկին խորհրդային երկիրներու մէջ հաստատուած հայերը:

Անցնող տասնամեակներուն, Հայրենիք-Սփիւռք կապերը խորհրդային տարիներուն եւ յետագային՝ Սփիւռքի Նախարարութեան շրջանին, ընդհանրապէս սահմանուած էին մշակութային եւ կրթական յարաբերութիւններութիւններով:

Բայց Նախարարութիւնը չի սահմանափակուիր լոկ հասարակական գործունեութեամբ: Այլ որպէս իրաւական եւ քաղաքական գետնի վրայ հիմք ունեցող պետական կառոյց, իր մասնակցութիւնը կրնայ ունենալ հայ ժողովուրդի կառավարման գործին մէջ:

Եւ որպէս վարչական միաւոր, իր անբաժան մէկ մասը կրնան կազմել նաեւ Սփիւռքահայերը:

Այս եղած է Սփիւռքահայութեան երկար տարիներու փայփայած երազանքը՝ դառնալ բաղկացուցիչ մէկ մասը Հայաստանի պետականութեան: Այն ինչ պիտի նպաստէ որպէսզի Սփիւռքի ներկայութիւնը հայրենի հողին վրայ հաստատուի որպէս ազգ եւ ժողովուրդ:

Այս մտածումներուն ոգեւորութիւնը բնականականաբար կրնայ նոր պայծառացում մը հաղորդել մեր ազգային կեանքին: Երբ կ'առաջնորդուինք տարագիր հայու հայրենասիրական գեղումներով: Սակայն միշտ չէ որ ցանկութիւնը եւ իրատեսութիւնը կ'ընթանան համաքայլ:

Երբ կը մտածենք, թէ որքանով կարելի է իրականացնել նման գաղափար մը, որուն համար տակաւին չունինք ուսումնասիրուած պատրաստ հիմնաւոր նախադրեալներ: Եւ Սփիւռքի մէջ չունինք միաձոյլ հաւաքականութիւն:



Թեւ նախորդ տարիներն Սփիւռքի Նախարարութիւնը Հայրենիք –Սփիւռք յարաբերութիւններու ոլորտը ընդլայնելու հեռանկարով մտադրութիւնը ունեցաւ ստեղծելու երկպալատ խորհրդարան: Բայց նման ծրագիր մը կարելի չեղաւ իրականացնել:

Որովհետեւ՝ նախ հարկաւոր էր լաւ ճանչնալ Սփիւռքը իր բազմաշերտ կառուցուածքով: Իսկ Սփիւռքը ճանչնալու համար կարելորդ նկատառումներէն մէկն է՝ Սփիւռքի աշխարհագրական տարանջատուածութիւնը: Չմոռնալ որ սփիւռքի պատմութիւնը իր ընդհանրութիւններուն կողքին, տարաբնոյթ երեւոյթ մը կը պարզէ:

Սփիւռքի ընդհանրութիւնները պահպանուած են ողջ հայ ժողովուրդին դարերով ապրած հոգեւոր ընդհանրութեամբ: Բազմադարեայ մշակոյթի , հարազատ աւանդոյթներու պահպանմամբ ու փոխանցմամբ իրերայաջորդ սերունդներուն:

Այդ ընդհանրութիւնը առաւել շեշտուած է՝ պատմական հայրենիքէն զրկուած ժողովուրդի մը գոյատեւման ու միաւորման ձգտումով:

Միւս կողմէն սակայն պիտի տեսնենք, որ աշխարհի տարբեր ցամաքամասերու, տարբեր երկիրներու եւ գաղութներու մէջ, սփիւռքահայը ձեռք բերած է տեղւոյն տիրող պայմաններուն յարմարող իր իւրայատուկ հոգեբանութիւնը: Հոն ուր ժամանակն ու հանգամանքները, մարդկային միտքն ու կամքը օժտած են հասարակական կեանքի առանձնայատկութիւններով: Հետեւաբար ամէն գաղութ ունի իր առանձնայատուկ, ուրոյն նկարագիրը:

Որովհետեւ քաղաքական տարբեր պայմաններու մէջ ապրող հայութեան զանազան հատուածներ, հասարակական յարաբերութիւններու ներգործութեան պատճառով, ենթակալ են բազմազան ազդեցութիւններու, որոնք ի յայտ կու գան զարգացման տարբեր մակարդակներու վրայ:

Այս նկատառումներէն ելլելով, այսօրուայ տիրող պայմաններուն մէջ նման կառոյց մը իրաւական եւ պետական հիմքով հնարաւոր չէ ստեղծել: Առաջին հերթին նկատի ունենալով Հայաստանի ներկայ իրավիճակը: Հայաստանը այսօր կանգնած է ներքին եւ արտաքին մարտահրաւերներու առջեւ, ունի հասարակական, տնտեսական ու քաղաքական լուրջ խնդիրներ, որոնց հապճեպ լուծումներ գտնելը անհնարին է:

Այս մեկնակէտէն ելլելով, որոշ հարցեր լուրջ քննարկման կարիք ունին, ձեռք բերելու հիմնական Նախադրեալներ ապագայի համար:

Ա. Անկասկած, աշխարհասփիւռ հայութեան ներգրաւումը Հայաստանի քաղաքական կեանքին մէջ ողջունելի է բոլոր սփիւռքահայերուն համար: Սակայն նման նախագիծ մը իրականացնելու համար, որքանով Սփիւռքը պատրաստ է որպէս միաձոյլ հաւաքականութիւն իր մասնակցութիւնը բերելու Հայաստանի պետական կեանքին:

Երբ մինչեւ այսօր չենք կրցած ստեղծել կազմակերպուած ու միաւորուած Սփիւռքի յատուկ կառոյց մը:

Բ. Այդ ծրագիրը նիւթացնելու համար, որքանով կարելի է հեռու մնալ տխուր հետեւանքներէ, հիասթափութիւններէ եւ յուսախաբութիւններէ: Յատկապէս մտաբերելով, որ Սփիւռքը ունի գաղափարական խմբաւորումներ:



---

Եւ հարկաւոր է ազգային խնդիրները ընկալել համազգային տարողութեամբ, պետական մտածողութեամբ ու պետական մակարդակով:

Գ. Ո՞ր Սփիւռքն է, որ ներկայացուցիչներ պիտի ունենայ Նախարարութեան մէջ: Յետեղեռնեան, յետանկախութեան, նախկին Խորհրդային երկիրներու, կամ բոլորը միասին որպէս՝ Սփիւռք:

Այս ուղղութեամբ կարելոր հարց է նաեւ, թէ ինչ հիման վրայ պիտի կատարուի Սփիւռքահայերուն ընտրութիւնը: Հայրենի Իշխանութիւններուն թէ Սփիւռքի որոշմամբ: Ովքեր իրաւասութիւն պիտի ունենան մտնելու այդ օրէնսդիր մարմին մէջ:

Դ. Սփիւռքահայութեան ներկայութիւնը, եւ Հայաստանի պետական գործերուն նկատմամբ որդեգրած քննարկութիւնն ու դիրքորոշումը, որքանով ընդունելութիւն պիտի գտնէ Հայաստանի քաղաքացիներուն մօտ: Որքանով տանելի է եթէ Սփիւռքը հետամուտ դառնայ Արցախեան բանակցութիւններուն, միջամուխ ըլլայ Հայաստանի ներքին խնդիրներուն:

Ե. Իսկ եթէ Սփիւռքը իր օրակարգը ընդլայնէ եւ ներկայանայ որպէս պահանջատեր Արեւմտահայաստանի բռնագրաւուած հողերուն եւ հայ դատին, հայ-թրքական յարաբերութիւններու լուծման տարբերակներ եւ ուղիներ առաջարկէ: Որքանով իր որդեգրած դիրքորոշումը ընդունելութիւն պիտի գտնէ, եւ պիտի յարմարի Հայաստանի պետական շահերուն:

Այս բոլորէն կ'ուզենք եզրակացնել, թէ Նախարարութեան գաղափարը որքան ոգեւորիչ ու խրախուսիչ է, սակայն կան այնպիսի հարցեր, որոնք կշռադատուած քայլեր կը պահանջեն, հեռու մնալու ներ Սփիւռքեան նոր հակասութիւններէն:

Բայց անկարելի բան չկայ, եթէ կարենանք այս ուղղութեամբ հարցերը հետապնդել լայնախոհութեամբ ու նոր մտածողութեամբ, շրջահայեաց ու ազգային առողջ կեցուածքով: Այլ խօսքով՝ եթէ փորձենք հասարակութեան մէջ հոգեբանական յեղափոխութիւն մը յառաջացնել, որպէսզի ժողովուրդը նոր մտածելակերպով ու նոր հայեացքով մօտենայ ազգային խնդիրներուն:

Իսկ երբ համերաշխութիւնը դառնայ ազգային հոգեբանութեան վերափոխման հիմք: Եւ մարդիկ կարենան իրենց վրայէն թօթափել հատուածական շահերն ու մեծամուլական ախտերը: Հասարակութեան մէջ հետզհետէ պիտի արթնան ազգային ինքնուրոյնութեան եւ հպարտութեան զգացումներ:

Այդպիսով միայն կարելի է շօշափելի դարձնել Սփիւռքի Նախարարութեան գոյութեան իմաստն ու նպատակասլաց ուղղուածութիւնը:

Եւ այն ատեն մենք կը մտնենք պատմական նոր դարաշրջան մը, պայծառ ու լուսաւոր մտքերով, եւ ազգային խոր հաւատքով:



## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ազատութիւնը ամենէն շատ հոլովուած, չարչրկուած բառ-հասկացութիւն է, ցարդ ամբողջովին չըմբռնուած, մանաւանդ դաժանօրէն չարաշահուած է, նոյնիսկ հոգեւոր ստրկութիւնը ներկայացուելով որպէս «ազատութիւն»...Ազատութիւնը էապէս ճանաչողութիւն է,

ինքնաճանաչողութիւն որպէս ՄԱՐԴ ԷԱԿ, որ ունի հոգեմտաւոր, բարոյական ԱՐԺԵՔՆԵՐ, ունի ազատ կամք զանոնք կենսագործելու իր կեանքին ընթացքին, առանց ստրկանալու աղաղակուող «չարժեքներուն», միշտ արթուն պահելով ներքին ձայնն ու խղճմտանքը...Եւ «ի՛նչը», «ինչո՞ւն», «ինչպե՛ս»ը հարցադրելով սեփական գիտակցութեան առջեւ...Ազատութիւնը ամբողջական, լիարժեք, արժանապատիւ ՄԱՐԴ ըլլալ է...որ կ'ապրի տիեզերքի Արարիչին հետ հոգեւոր միասնութեան մեջ....

.....

Այնքան շատ են, մեր օրերուն յատկապէս, կեղծիքն ու շողոքորթութիւնը, երեսպաշտութիւնն ու մակերեսայնութիւնը, որ չես գիտեր՝ ո՞վ է ճշմարիտ բարեկամը, որ իսկապէս կը բաղձայ քու երջանկութիւնդ, կը կիսէ ցաւդ ու խիստդ, եւ որուն բարեկամութեան կրնաս վստահիլ ու ապաւինիլ....: Մարդ Էակը, ըստ Էութեան, ՄԻԱՅՆԱԿ Է մեր ներկայ ժամանակներուն, նոյնիսկ եթէ ան շրջապատուած է մարդկանցով...Գոյութենական այս մենակութիւնը շէտուած է՝ մանաւանդ անոնց մօտ, որ տուրք չեն տար հոգիի եւ մտքի վրայ գործադրուող ճնշումներուն,...որոնք հեռու են սուտէ ու կեղծիքէ...որոնք ճշմարիտը կը խօսին եւ չեն քծնիր ի հաճութիւն այլոց....Նմանները բարձր գին կը վճարեն իրենց ուղղամտութեան համար յայտնապէս...

.....

Եթէ ժողովրդավարութեան, մարդկային իրաւանց դրոյթները լաւագոյնս գործեն մեր երկրին մեջ, եթէ օրէնքի գերակայութիւնը դառնայ կեանքի իրականութիւն...Եթէ նոյնիսկ աղբատութիւնը ի չիք դառնայ եւ կեանքը դառնայ բարօր ու բարգաւաճ բոլորին համար ալ...բայց աղօտի մեր երկրին ազգային դիմագիծը, նուազի անոր հայկականութիւնը՝ մեր լեզուին, մշակոյթին, հոգեմտաւոր արժեքներուն, վարք ու բարքին մեջ արտայայտուած, ու չարմատաւորուի այնտեղ ազգային գաղափարը...յայնժամ մենք չենք ունենար ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, որ սկզբնակէտն ու վախճանական Նպատակն է մեր պետականութեան....անոր ալֆան ու օմեղան:

.....



ՉՈՒԱՐՃԱՆՔԻ ՄՇԱԿՈՅԹ...Ահաւոր է հոգիի, հոգեւորի, հոգեկան նահանջը....երբ մարդը նկատի կ'առնուի սոսկ որպէս մարմնական գոյութիւն, իսկ անոր միտքն ալ՝ որպէս ծառայ սպասարկելու իր մարմնական պէս-պէս կարիքներուն ու յղիացումին....Ահաւոր է երբ կ'անտեսուին, Նոյնիսկ կ'արհամարհուին հոգեկանը, հոգիի Եական կարիքները...Ահա թէ ինչու մարդ Եակը հոգեկան խոր անձկութիւն կ'ապրի՝ Նոյնիսկ նիւթական շքեղ ու փարթամ պայմաններու տակ, քանզի սովի մէջ է անոր հոգին, որուն կարիքները ամբողջովին այլ են....Հոգին կը փնտռէ գեղեցիկը, բարին ու բարութիւնը, ճշմարիտն ու ազնիւը, բնականն ու պարզը...Եւ խոր տառապանք կ'ապրի, երբ չգտնէ զանոնք....Նիւթի եւ ինչքի կուտակումը, զուարճանքի մշակոյթը Եապէս կը հեռացնեն մարդը հոգեկանէն....Սա դարուս գուցէ ամենէն հրատապ հարցերէն մէկն Ե....

.....

ՄԻՏՔԻ ԿՂԶԻԱՑՈՒՄԸ գուցէ ամենէն մեծ սահմանափակումն Ե....ի հակադրութիւն մտքի բացութեան, լայնահորիզոն տեսադաշտի, տեսակետներու լայն փոխանակման եւ հաղորդակցութեան....Կղզիացած միտքը կը միտի, վերջ ի վերջոյ բացարձակացնելու իր ճշմարտութիւնը, կը լճանայ ու կը ճահճանայ ....Բաց միտքը նախապայման է ամեն յառաջդիմութեան....

.....

Համաշխարհայնացած դրամատիրութեան դրուածքին համար՝ ամեն ինչ վաճառելի ապրանք է. մարդը, պատմութիւնը, մշակոյթը, հայրենիքները, Նոյնիսկ բնութիւնն ու անոր պաշարները....Եւ՝ ազգերը, որոնք ներկայիս զանգուածաբար կ'արտագաղթեն մարդուժ հայթայթելու այլ պետութեանց եւ յընթացս կորսնցնելով իրենց ազգային դիմագիծը....Անդէմ, անդիմագիծ եւ անազգ բազմութիւնները տակաւ կը շատնան եւ կը դառնան շրջուն խլեակներ...Սա քաղաքակրթութեան ճգնաժամն է

.....

Ժամանակակից գիտութիւնը յենուած է գերազանցօրէն՝ զգայարանքներէն մեզի փոխանցուած փորձառութեան, տրամաբանութեան եւ չոր բանականութեան վրայ....Մինչդեռ ամենէն սրատես աչքը չի տեսներ Ա՛յն, ինչ որ ՍԻՐՏԸ կը զգայ....Իսկ ինչպէ՞ս մարդ Եակը յաճախ կ'ըմբռնէ անըմբռնելին, կ'իմանայ անիմանալին....

.....

Ընտանիքը, դպրոցը, հայրենիքը, նախ եւ առաջ, զոհողութիւն կը պահանջեն մեզմէ իւրաքանչիւրէն՝ ամրանալու, յառաջդիմելու, բարգաւաճելու համար....: Եթէ մէկը սկսի սակարկել իր աշխատանքը, իր Նուիրումը, միայն շահոյթի համար գործել, յայնժամ մենք կ'ունենանք քայքայուած ընտանիք, լճացած դպրոց եւ խորտակման եզրին կանգնած հայրենիք....: Ազգի այս եւ այլ հիմնասիւնները համարուող սրբութիւնները կարօտ են մեզմէ իւրաքանչիւրին ամբողջական գուրգուրանքին, սիրոյն, զոհաբեր աշխատանքին....Հայրենիքը կը սկսի ամեն մէկէս, առանց բացառութեան....

.....

Դժուարութեան, նեղութեան եւ տագնապի պահերուն, մարդ Եակը կարծէք աւելի կը մարդկայնանայ, աւելի խորութեամբ կը զգայ ուրիշին տառապանքը, ցաւը,



Նեղութիւնը...Միանգամայն ձեւի ու ձեւականութեան դիմակները կրնան վար առնուիլ, սիրտն ու հոգին կը դառնան թափանցիկ.....Կը պատռին սուտի ու կեղծիքի շղարշները, որոնցմով կը քողարկուին յաճախ ցոփ ու շուայտ կեանքի բազմատեսակ երեւոյթները, որոնք մարդը մարդէն տարանջատող արհեստական պատուար կը ստեղծեն շարունակ....«Տառապանքին ընդմէջէն ուրախութիւն», ըսած էր մեծ մտածող մը....Կարելի է նաեւ ըսել՝ տառապանքին ընդմէջէն մարդկայնութիւն....

.....

Արտաքին եւ ներքին լիարժէք քաղաքականութիւն չունենալնուս հետեւանքը շատ ծանր կ'ըլլայ միշտ մեր ժողովուրդին համար....Ներքին քաղաքականութիւն՝ հիմնուած ազգային գաղափարախօսութեան եւ հոգեւոր-մշակութային արժէքներու համակարգին վրայ...Արտաքին քաղաքականութիւն՝ հիմնուած մեր պատմական իրաւունքներուն եւ ազգային-պետական անվտանգութեան վրայ....Կ'ապրինք կարծէք օրը-օրին, պատահական իրադարձութիւններուն արձագանգելով, երբեմն հապճեպօրէն, առանց երկար-բարակ մտածելու, քննարկելու, վերլուծելու....Զունինք մշակութային քաղաքականութիւն, չունինք ազգային ծրագիր, ո՞ր եւք մենք վերջ ի վերջոյ աշխարհաքաղաքական այս բարդ իրադրութեան մէջ, ուր կ'ապրինք:

.....

Որքան յատկանշական իմաստ ունի «Յուդայի համբոյր» ասոյթը, որուն աղբիւրը՝ մեծ մատեանն է, կամ մատեաններու մատեանը...որուն կ'անդրադառնանք Աւագ Շաբթուան մէջ կրկին ու կրկին անգամ...: Իսկ ներկայիս աշխարհին մէջ, որքան շատ են Յուդայի համբոյրները, որոնք սիրալիր բարեկամութեան քօղով պճնուած, խորքին մէջ դաւաճանութիւն են յանուն «երեսուն արծաթի»...Իսկ քաղաքական աշխարհին մէջ, ամէն օր մենք ականատեսը կը դառնանք Յուդայի համբոյրներուն, որոնք բարիքի քօղին տակ չարիք ու մահ կը սփռեն ամենուր, միշտ «մարդկային իրաւունքներ»ու եւ այլ սկզբունքներու քօղին տակ թաքնուած....

.....

ՈԳԻՆ բարձր պահելը ամէնէն մեծ յաղթանակն է, զոր կարելի է տանիլ ընդդէմ կեանքի հազարանուն դժուարութիւններուն, մարդկային նենգութիւններուն, ճակատագրի հարուածներուն....Ամբողջ մարդկային պատմութիւնը գուցէ պատմութիւնն է, վերջ ի վերջոյ, մարդկային ոգիի անպարտելիութեան ընդդէմ հազարամեակներու ամէնէն դաժան ու դժխեմ պայմաններուն եւ պարագաներուն....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԲԱՌԸ

Երբ ամեն ինչ կը վերջանայ

Օրը յոգևած կը յօրանջէ

Մեր միտքերուն, սիրտերուն մէջ

Բառն է որ կը հեւայ դարձեալ

Նոր սկիզբ կ'առնէ, կը թրթռայ

Նոր կայծ կու տայ, կը բոցկլտայ

Նոր միտք կու տայ, կը խոյանայ

Աշխարհներու ծնունդ կու տայ...

Աղօթքի պէս մեզ կ'առնչէ

Լոյսին, յոյսին, Արարիչին

Աղօթքի պէս կը վարարէ

Յոգիները արարչածին...

Բառը՝ աշխարհ ու տիեզերք է

Խոկումներու խորան մըն է

Լոյսի, սիրոյ փնտռտուք է





---

Վառ յոյզերու ներշնչում է...

Բառը երազ ու անուրջ է

Նոր աշխարհի արարում է

Խոստովանանք մըն է անկեղծ

Ինքդ քեզի ու խղճիդ հետ...

Բառին վերջը մահը ինքն է

Բառը կեանք է ու ոգի է

Արարում մը՝ որ վերջ չունի

Մինչ վերջին շունչը մեր կեանքին...

ԵՐԱՆ

.....

ՏԱՐՓԱՆՔՈՎ ՄԸ ՀՐԱՎԱՌ

Աշնան նաշխուն կածանին մեջ մոլորուէի

Մոռցած հոգեր, խռովքներ բազում ու տաղտկալի

Սիւքը մեղմիւ շոյէր գլուխս խոնջ ու յոգնած

Ու փարուէի երանգներուն աշնանավառ...

Տերեւները ինձ պատմէին հեքիաթն լուսէ

Սօսափիւնովն իրենց քնքուշ զերթ մեղեդի

Ուր համակ կեանք մը կը տրուիէ երագահեւ

Ուր շրշիւնը սիրոյ դող է սրսփագին...

Երա՛նգ-երա՛նգ հաղորդուէի խոր խորհուրդին

Կեանքի իրենց հրակարմիր մայրամուտին

Եւ տարփանքով մը հըրավառ հոգիս կառչէր

Կեանքի լոյսին, մարդ եակին, տիեզերքին....

ԵՐԱՆ



.....

#### ԺԱՄԱՆԱԿԻՆ

Ժամանակը իլեց տարաւ գարուննէ՛րս կենսափթիթ  
Երազնէ՛րս տուաւ հովին, զանոնք ըրաւ հողմացըրիւ  
Ու սահեցաւ այնպէս արա՛գ որ չնայէր գէթ մի վայրկեան  
Թէ ի՛նչ աւեր ան կը գործէր անցումովը կործանարար...

Ամառներուս հո՛ւրը մարեց անգթօրէն ու անայլայլ  
Ուր բո՛ց ու կրա՛կ հրկիզէին սիրտս, հոգիս ջահավառեալ  
Խոնջէնք չունէր կորովս պիրկ, եռանդս վառ, հրայրքս թէժ  
Ու կը թուէր ժամանակն պիտ' բացառէր զիս աւերէն...

Գէթ իմ աշնան ինայէ՛ գարկդ, թող հուրհրատէ շքեղօրէ՛ն  
Չէ՞ որ աշնան միրգերն հիւթեղ կը բաշխուին առատօրէ՛ն  
Միրգեր որոնք կուտա՛կ-կուտա՛կ գարնան արեւ ունին լուսէ  
Յուրքը ամռան որ շի՛թ առ շի՛թ սիրահիւթն իր թող ընծայէ...

#### ԵՐԱՆ

.....

#### ԸԼԼԱ՛Մ

Իրիկնային անդորրն ըլլա՛մ  
Քնքուշ հպիմ յոգնած մարդուն  
Յրեմ խոնջէնքն ու ցաւերն ալ  
Երազ փռեմ իր աչքերուն...

Իրիկնային հովիկն ըլլա՛մ  
Փարուիմ մեղմիւ ծառին, ծաղկին  
Տարածեմ շունչս հոտեան



---

Բուրումներով սիրափթիթ...

Գգուեմ կոպերն ծերին, մանկան

Շոյանքով մը սիրագորով

Խաղաղ նիրհեն մինչ լուսաբաց

Անուրջներով բիւր, քաղցրօրօր...

ԵՐԱՆ

.....

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԵՍ

Մանկութեան լոյս ակունքներես

Լուսափունջեր ինձ պիտ' բերեն

Մաքո՛ւր, մաքո՛ւր այն բերկրանքը

Անապական լոյս թրթիռը

Որ միշտ մնաց հոգիիս մէջ

Ու ճառագեց մռայլ օրերուս

Չայն ընծայեց լուսացնծուն...

Մանկութեան խօլ տարիներես

Միամիտ սրտի կոյր հաւատք մը

Դեռ պիտ' ցոլայ միշտ լուսերես

Ու պիտ' գտնէ լոյս ճաճանչ մը

Մարդկային գորշ ժխորին մէջ

Ու սենն անգամ սպիտակ տեսնէ

Դեռ պիտ' խնդայ զարմանատես...

ԵՐԱՆ

.....

ԱՅԲ-ԲԵՆ-ԳԻՄԻԴ

Այբ-բեն-գիմիդ տառերը լոյս



---

Երբ կը կաթին գրչիս ծայրին  
Ինձ կը թուի հատի՛կ-հատի՛կ  
Աստղիկներ են երկնէն անհուն...

Այբ-բեն-գիմիդ տառերը սուրբ  
Երբ կը հեգեն վիհը հոգւոյս  
Ինձ կը թուի պարիկներ են  
Իջած երկնէն հրաշքի մը պէս...

Այբ-բեն-գիմիդ խորհուրդով մեծ  
Երբ կը բանամ սիրտս, հոգիս  
Ինձ կը թուի բանալի են  
Բիւր սիրտերու առեղծուածին...

Այբ-բեն-գիմիդ տառերով հրաշք  
Դեռ կը խօսիմ Աստուծոյ հետ  
Եւ նուաստս կը բարձրանայ  
Դէպի երկինքն անծիր, անեզր..

ԵՐԱՆ

.....

ՈՒ ԵՐԲ

Ու երբ ամէն բան աւարտի  
Ձըմեռ չոքէ սրտիս ափին  
Յուշերս բորբ պիտ' բորբոքեմ  
Գուցէ գտնեմ կայծ-հիւլէներ  
Որ անթեղուած պիտի ապրին  
Սրտիս խորունկ սափորին մէջ



---

Եւ կայծկլտան սիրոյ շիրթեր

Պարունակիս մէջ լուսածին...

Կայծերուն հետ պիտ' հրավառի

Էութիւնս ձմեռուան մէջ

Մոռցած տարիք, մոռցած ձըմեռ

Պիտի երգէ լոյս ու արեւ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Գրական-Մշակութային

### ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

### ՆՈՐ ՄԱՐԱՇԷՆ... ԹԱԼԱՊԻԱ

(Տեսարաններ)

Վարդան Թաշճեան



Թալապիան 1950-ին, կախուած սուճուկները, կաթսան եւ մեծ մայրս՝ ձախին

Մանկական տարիներուս մտքիս մէջ՝ խեղճուկ տուններու, խանութներու, նեղ փողոցներու եւ կեդրոնը՝ Ս. Քառասուն Մանկանց տիրական եկեղեցիով, հարազատ պատկեր եւ օճախ մնացած է Պուրճ Զամուտի Նոր Մարաշ թաղամասը, «Նոր»ը պահելով աւելի ածական

բան թէ՛ երեւոյթ, յետ-եղեռնեան խոնարի պայմաններու պաճուճապատանքին մէջ:

Նոր Մարաշ...

Ինքնին բաղդրահունչ երկու սկզբնաբառերն էին ամեն մէկ կառոյցի, այդ շրջանի սահմաններուն մէջ, եկեղեցի՛, դպրո՛ց, սրա՛հ, ակո՛ւմբ, հայրենակցական միութիւն, բարեսիրական հաստատութիւն, դարմանատուն կամ շուկայ: Փողոցներն անգամ անուն չունէին, այլ միայն՝ «Նոր Մարաշ» եւ շէնքին թիւը, իբրեւ հասցէ: Տեղացին յատուկ պարծանք եւ ուրախութիւն կը զգար այդ աղբատութեան մէջ, հայրենական Կիլիկիոյ փարթա՛մ ու դիւցազնայի՛ն Մարաշի օդը շնչելու այս Նոր Մարաշի ա՛լ ապահով երկնքին տակ: Ընտանեկան մթնոլորտ մը կը տիրէր ամենուրեք, եկեղեցիէն ու դպրոցէն մինչեւ ակումբ, խանութներէն մինչեւ Մեծ ու Փոքր երկու Բաղնիքները, «Արաքս» սինեմայէն մինչեւ «Գերմանիկ» սրահը, կօշկակարներու «թախ-թախ»էն մինչեւ թաղէ թաղ կառքի վրայ վաճառորդներու «պատտիխ պէլէտի» (տեղական ընտիր ձմերուկ) մունետիկեան կանչը, մինչեւ՝ սառը շատոնց հալած եւ աչքերը փոսացած «թագա սեմէք»ը (թարմ ձուկ), մինչեւ տակաւին՝ Նահր գետին նեխած ջուրերուն ծննդաբերած խայտաբղետ ու խայտառակ մժեղները:

Բնակչութեան մէկ մասը «հին Մարաշցի» էր, շատեր՝ իրարու ազգական, իսկ եթէ ոչ՝ անպայման ծանօթ կամ բարեկամ: Դուռ-դրացնութեան այժմու ինքնամփոփ վերաբերումը չկար, այլ կային առանց ժամադրութեան սուրճի եւ շաղակրատութեան փոխադարձ այցերը, պատուհաններէն ժայթքող բահ-բահներով, իբրեւ առօրեայ կեանքի թթխմոր: Պատրաստուած ճաշեր կամ տօնական օրերու ճիտապուր, անուշապուր, գաթայ, կարկանդակ, ներկուած հակկիթ, պնակ-



պնակ, տունէ տուն, խոհանոցէ խոհանոց կը փոխանակուէին, սիրայօժարօրէն, ե՛ւս սերտացնելով յարաբերութիւններու բնականոն աստիճանը:

Պարզութեան մէկ ուրիշ երեսը պարագայականօրէն արմատացած թրջախօսութիւնն էր, հին սերունդին խօսակցական լեզուն, առանց սակայն հայութիւն վիրաւորելու եւ Եղեռնի զոհերուն յիշատակը արատաւորելու դիտաւորութեան: Թրբերէնով անէծք ու հայիոյանք անդադար կը տեղար դարաւոր թշնամիին հասցէին, նոյն ատեն հաւատամքով ու գիտակցութեամբ դաւանելով հայու ոգին մատղաշ սերունդի ներկայացուցիչներուն մօտ, մինչեւ որ «թրբերէնով խօսողին հայերէն պատասխանէ» կարգախօսը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու ազգային կազմակերպութիւններու հաւաքական ջանքերը յաջողեցան վերջակետ մը դնել անբաղձալի այդ կացութեան:

\* \* \*

Միջանկեալ, ասիկա այն թուրքն է, որ անտեսելի՛վ, արհամարհելի՛վ միջազգային ամէն օրէնք կամ իրաւունք, այս օրերուն, Կիպրոսի բարբարոսային իր ներխուժումէն 45 տարի ետք, բռնագրաւուած յունական Ֆամակուստա ծովեզերեայ գեղեցիկ, բայց ամայացած, որբացած քաղաքը կ'ուզէ անկուշտօրէն իւրացնել, վերաբանալ, վերաբնակեցնել՝ այս անգամ թուրքերով եւ վերակոչել... Մարա՛շ: Նո՛ր Մարաշ, քիչին գալով կարծես յափշտակած մեր հի՛ն Մարաշը....

\* \* \*

Նոր Մարաշի հարազատութիւնը բնորոշող երեւոյթ էր նաեւ յորջորջումներու շարքը: Կիւբիւր, Սանճաքը, Պոքսեր Արամ, Էմմը Օղլու, Պերպեր Միսաք, Սայաճի Աւետիս... ամէն մէկը՝ հին Մարաշի մէկ բեկորը, վերածնած ընտանիքով նոր կեանք, նոր հայութիւն կերտելու ասպնջական երկրի մը գիրկին մէջ:

Ապրիլ 24-ը, Վարդանանցը, Մայիս 28-ը կ'ոգեկոչէր նոյն շունչով, ուխտով ու ապագայի յոյսերով, փակելով խանութ, գրասենեակ, գործ, գործարան, դպրոց: Եկեղեցւոյ զանգը լսե՛ց, ամէն զբաղում կը սառեր պահիկ մը, Աստուածահաճոյ իր խաչը հանելու համար: Յեռուէն քահանան տեսա՛ւ, չէր անտեսեր, քայլերը չէր փոխեր, այլ կը մօտենար եւ երկիւղածութեամբ ձեռքը կը պագնէր «Օրհնեցե՛ք, Տէր Յայր»ով մը: Պարզամիտ մարդիկ, հնամենի, թերեւս անուս, բայց շատ անգամ ուսեալէ մը աւելի քաղաքավար, համեստ, խոհեմ, իմաստուն, սրամիտ, լեզուանի՛, ինչ փոյթ թէ բնագրաբար ու նոպայական՝ հայիոյանքի քանի մը պատառ սպրդէր այդ լեզուէն, նարտի սեղանին վրայ, չար բախտի մէկ պահուն: Նահապետականութիւն մը կար, բարի սովորութիւններու անձնատուր: Հարուստը հարուստ էր, աղքատը՝ աղքատ, բայց վարի խաւը ցոյցի կամ բողբոջի չէր դիմեր վերի խաւին դէմ, դասակարգային այս տարբերութեան համար: Փառք կու տար Ամենակալին, որ արեւը ըմպելու երջանկութիւնը կը վայելէր անիծեալ թուրքին եաթաղանէն շատ հեռու, ինչ գոյն ալ ցոյց տային ընկերային կեանքի ոլորտները:

Առտու կանուխ, արեւը դեռ չծագած շարժումը ծայր կու տար փողոցներուն մէջ: Փռապանը, կաթնավաճառը, նպարավաճառը, մսագործը աշխատանքի կը լծուէին վերանորոգ աշխուժութեամբ առ ի պատրաստութիւն հետզհետէ ներխուժող յաճախորդներու բանակին, մինչ պաշտօնեաներու եւ բանուորներու խումբը, կէսօրուան ուտելիքը ձեռքին կ'ուղղուէր դէպի հանրակառքի կայան, ժամ առաջ հասնելու աշխատատեղի, հայու իր քրտինքը զոհաբերելու ի ինդիր՝ աքսորական ճամբու ճիրաններէն ճողոպրած ընտանիքի մը բազմապիսի կարիքներու



գոհացման: Անձնական ինքնաշարժը սովորական տեսարան մը չէր այդ նեղ ճամբաներու երկայնքին, եւ մարդկային կեանքն ալ կ'եռար աւելի մայրերու վրայ քան թէ՛ ասֆալթին:

Մեծ հայրս, Գասպար աղան, անուն մըն ալ իրը՝ «Տաշճը Գասպօր», հակառակ յառաջացած տարիքին, ոտքը ոտքին վրայ՝ նարկիլեով «վախը» (ժամանակ) անցընտողը եւ հանգիստ որոնտողը չէր: Ապրուստի հոգով սնանող հայու տարագիր մըն ալ ինք, միւսներէն առաջ կ'արթնար, կ'իջներ մեր տան գետնայարկ «փաչա»յի իր ճաշարանը, փոքր կաթսաներու մէջ մեծ մօրս օգնութեամբ կը խաշէր միսը, կը համեմէր սխտորի, պղպեղի ու կիտրոնի հետ եւ տաք պնակի գոլորշիէն տարածուող ախորժաբեր բուրուով սննդարար այս ուտելիքը կը հրամցներ անոր սիրահարներուն, ծմբան մանաւանդ, դուրսի ցուրտին ու անձրեւին ա՛լ աւելի բազմապատկելով զայն դգալելու մարմաջը: Եթէ երբեք մաղձաճարպի (քոլեսթերոլ) աստիճանն ալ վերելք արձանագրէր երակներէն ներս, ի՛նչ փոյթ: Շատ առտուներ ինծի ալ կը կերցնէին այս «ճարպապուր»ը, դպրոց ուղղուելէն առաջ, պնդելով, որ ոսկորներուն «իլիկ»ն ալ (ծուծ) անպայման կլլեմ, որպէսզի «զօրանամ» դասերէն առաջ:

Առտու մը, պատահեցաւ որ 5 լիբ. ոսկի թղթադրամ մը գտնեմ գետինը, սեղաններէն մէկուն տակ: Քիչ դրամ չէր այդ օրերուն: Ուրախութիւնս երկար չտեւեց սակայն:

- «Պա՛խ օղլում, պու փարա սէնին օլամագ, օնուն սահիպի վար, պանա՛ վեր պախալըմ, էֆֆէրիմ»:

- «Նայէ՛ տղաս, այս դրամը քուկդ չի կրնար ըլլալ, անոր տերը կայ, ինծի տո՛ւր նայիմ, ապրի՛ս»:

Տնծութեանս վրայ քամուած այս քացախը սակայն բարոյական կարեւոր դաս մը տուած եղաւ ինծի, կանուխ տարիքէն ծանօթանալու մարդկային խղճամիտ եւ արդար վերաբերումին: Քանի մը օր ետք դրամին տերը գտնուեցաւ եւ 50 դրուշով վարձատրեց զիս: Մաքո՛ւր գործ:

Բարի եւ ուղղամիտ մարդ էր մեծ հայրս, հին սերունդի մարաշցիներէն, պապենական իր տան երագով օրօրուն: Օրուան յոգնութիւնը կը փարատէր, երբ զիս գտներ իր գիրկին մէջ:

Չափազանց կը յուզուէր «Մարտիկի երգ»ը՝ «Թռչէի մտքով տուն»էն, գաւաթ մը երկու օղիի ազդեցութեան տակ: Ամէն անգամ իր խնդրանքին վրայ, երբ երգը երգէի իր բոլոր տուններով, 25 դրուշ մը կը սահեցներ ափիս մէջ, յորդառատ արցունքները աչքին: Քանի մը առիթներով չարաշահեցի իր այս ազնուութիւնը, մանկական անկարգութեամբ եւ երգին առաջին տունին՝ քառորդ ոսկին գրպանելուս պէս կծիկը տուի, մնացեալ տունները թողելով իր միախարական երեւակայութեան:

Նման չարաճճիութիւն մը հարկաւ անկարելի էր երեւակայել նախակրթարանիս՝ Նոր Մարաշի Ս. Քառասուն Մանկանց Վարժարանի կամարներուն տակ, ուր տնօրէն Սեդրակ Չաւէնի գերմանական «տիսիբիլի»ը, բուրվառի պէս առջեւ ետեւ ճօճուող ձեռքի սրածայր գաւազանով, ազդանշան էր գլխու գալիքին, դպրոցական ներքին կանոններու խախտումին դիմաց:

«Գողութիւն ըրէ՛ք, բայց մի՛ բռնուիք», կը յայտարարէր երբեմն, բարձրաձայն, զքօսանքներէն ետք շարքի կեցած հարիւրաւոր աշակերտներուն, դասարան ուղղուելէ առաջ: «Գողութիւն»ը, հոս, իրեն համար «անկարգութիւն»ն էր, որուն սահմանումը լաւ կը հասկնար ու կը հասկցներ դպրոցին կարգապահութիւնը բարձր պահող հեղինակաւոր, խստապահանջ եւ շուքը ծանր մօտեցումով: Երբեմն զքօսանքին վազե՛լն անգամ կը նկատուէր արգիլեալ գօտի, փոքրիկի մը





զարնուելու եւ անզգուշաբար զայն գետին տապալելու վտանգը կանխելու նպատակով: Նեղ կու գար բակը բաղդատած՝ աշակերտութեան թիւին:

Յայերէն լեզուի մեր ուսուցիչն էր Պրն. Լեւոն Ազիւաչերեանը, գրական ծածկանունով՝ Չարեհ Չարգուն: Համակրելի եւ զուարթամիտ մարդ մըն էր: Կը սիրէի զինք եւ իր դասաւանդած նիւթը: Դասը պահանջելու իր սովորութիւնն էր պատ հանելու աշակերտը, դասագիրքով եւ կատարելու սահուն ընթերցումի, բառագիտութեան եւ ուղղագրութեան քննութիւն: Շատ կը նեղանար ուղղագրական արտառոց սխալներէն եւ յաճախ պահի լրջութիւնը շաքարոջ կատակով, սա սպառնալիքը կու տար դասարանին:

- Ձեր մէջէն կարծեմ մի քանի հոգի պիտի դնեմ խոշոր պարկի մը մէջ, բերանը լաւ մը պիտի կապեմ, ծանր քարով եւ պիտի նետեմ Նահր գետին մէջ...

Առիթով մը պատին վրայ գրեց նմանաձայն երկու բառեր, հաջող- յաջող եւ պատ ելած աշակերտին դառնալով հարցուց:

- Հիմա մէկ մէկ ըսէ՛ նայիմ այս բառերուն իմաստը:

Դասընկերս քիչ մը վարանոտ, ուզեց վստահ ըլլալ տալիք պատասխանին վրայ եւ յետոյ խիստ գոհունակ՝

- Առաջի՛նը պարոն, շունը կը հաջէ՛, շունի ձայն...

- Լաւ, միւսը՞ ...

- Միւսն ալ... մա՛րդը կը «յաջէ», պարոն...

Ահագին խնդուք մը պայթեցաւ դասարանին մէջ, Պրն. Չարգունն ալ միասին, իր մի քանի ոսկի ակռաներուն ամբողջական ցուցադրութեամբ: Վստահաբար բարեկամս «կը յաջողի» պիտի ըսեր, բայց այդ վայրկեանին, բոլորին աչքին առջեւ լեզուն դաւաճանած եղաւ իրեն, ինչ որ պատահական է միշտ:

Իբրեւ աշակերտ պարտաւոր էինք եկեղեցի ներկայանալ ամեն Կիրակի, պատարագին, դպիր ըլլայինք կամ ոչ: Դպրապետն ալ իր սաստերով ետ չէր մնար Սեդրակ Չաւենեանի խստութենէն, եթէ երբեք համարձակէինք եկեղեցոյ դասը, խորանին առջեւ կողմակի խօսիլ, գետինը նստած ոտնածալ, մեզի համար երկարապատում եւ անհասկնալի քարոզի մը պահուն:

Բայց առանց բացառութեան, «ստեպոյինս ալ, գաւազանին կողքին» իր համը կ'արտայայտէր դրական գործունէութեան ի տես:

Ատենամարզանքներուն, որոնք տեղի կ'ունենային եկեղեցոյ մէջ, գեղեցիկ արտասանութիւն մը, մեներգ մը, օրինակելի արարք մը եւ կամ առաջնակարգ արդիւնքներ դասերու մէջ անպայման կ'արժանանային գովեստի, բարենիշի, ծափահարութեան: Իբրեւ դպիր, երբ հանգուցեալի մը դագաղին առջեւէն մոմակալը բարձր բռնած կը կտրէինք եկեղեցիէն մինչեւ Պուրճ Համուտի գերեզմանատունը երկարող քանի մը քիլոմետր ճամբան, մէկ լիբանանեան ոսկի մըն ալ կը մտնէր գրպան, բառերէն անդին գործնական գնահատումով:

Կը պատահէր երբեմն, որ անսպասելի եւ անհաճոյ զուգադիպութեամբ եկեղեցոյ թաղը կը զգենուր հակոտնեայ վիճակ: Խլացուցիչ ճշակներով հարսանեկան ինքնաշարժներու



Ժամանումը աւետող կարաւանը, սպիտակ ժապաւեններով զարդարուն՝ կը հարկադրուէր կանգ առնել մայր դարպասին չհասած, սպասելով, որ Նոյն պահուն սեւ ժապաւեններով ուսամբարձ դագաղ մը տեղաւորուի մեռելակառքին մէջ, լաց ու կոծի սեւազգեստ սգակիրներու խումբը ետեւէն: Դառն իրականութիւն, թէ՛ կեանքի անխուսափելի երեւոյթ:

Եկեղեցիին կից հետաքրքրական կեդրոն մըն էր Էմմը Օղլույի գրախանութիւնը: Բերնէ բերան թխմուած գիրքեր, տետրակներ, գրեմական գոյքեր, դասագիրքեր, վէպեր, մինչեւ իսկ Շէքսպիրի «Օթելլօ»ն կարելի էր գտնել հոն, այդ դէպքերուն մէջ: Լաւը այն էր, որ գործածուած դասագիրքեր ետ կ'առնէր յարմար գինով եւ Նորոգելէն ու վերակազմելէն ետք, չնչին շահով մը դարձեալ կը վաճառէր թաղի փոքրիկներուն, տասնամեակներ առաջ իր Նպաստը բերած ըլլալով այսօրուան վերամշակման (recycling) համատարած ջանքերուն...: Միտքիս մէջէն ելքի վիզա չէ առած երբեք Էմմը Օղլուին ֆիզիքականը, բարձր իր հասակով եւ քիթին տակի քառակուսի պէխով, Սեդրակ Չաւենիին նման:

Տուները բաղնիք ունէին, սակայն տարբեր էր Նոր Մարաշի երկու Մեծ ու Փոքր արեւելեան Բաղնիքներու եզական հաճոյքը: Այրեր եւ կիներ օրուան տարբեր ժամերուն հոն կ'առնէին իրենց լոգանքը, արբեցուցիչ այդ մթնոլորտին մէջ, ու աւելի վերջը գորգապատ օթեակներու բարձերուն վրայ կը ցամբեցնէին իրենց տաք մարմինը պաս-պաղ «կազոզ» ժալլուլի մը կլկլացող պղպջակներուն հետ: Ամեղունակ ու անգիտակից՝ փոքր տարիքիս մօրս հետ կ'երթայի լոգանքի: Շոգեպատ այդ սենեակներուն մէջ, ձիւնի պէս կը մաքրուէր մարմինը, «բէսէ»ներու եւ շփոցներու խարտոցումէն, հոգ չէ թէ քերթուէր ու ցաւեր կարմրած մորթը: Չարաբաստիկ օր մը սակայն, մանկական սրբութենէս քիչ մը շեղելով կը թուի թէ պետք եղածէն աւելի երկա՛ր ու բերանաբաց դիտած ըլլամ, դիմացը, ոտքի վրայ գլուխէն վար թասով ջուր թափող մօրեմերկ մանկամարդուհին:

- Նայէ՛, նայէ՛, նայէ՛, սըւոր նայէ՛, անամօթ, ա՛ն քեզի ...

Մօրս յանկարծական շառաչուն ապտակին հետ, ոչ միայն բերանս գոցուեցաւ, այլեւ գլուխս ալ ուժգնօրէն ոլորուեցաւ դէպի ուրիշ մերկութիւն՝ բաղնիքին պա՛տը, քիթս դպցնելու չափ, պատիժս բազմապատկող որոտագոչ հրամանով մը, որուն արծագանգը պատէ պատ պտոյտ կատարեց լոգարանի տարածքին:

- Վաղուընէ սկսեալ այլեւս պապայի՛դ հետ կու գաս... խա՛լաս (վերջացաւ)...

Տարիներ ետք, երբ զուարճանքով կը յիշէիք այս դէպքը, մայրս հետեւեալ խոստովանութիւնը կ'ընէր ինծի:

- Առաջին պատիժին ձայն չհանեցիր տղա՛ս, բայց երկրորդին շատ լացիր... ինչո՞ւ...:

Մեր տան դիմացը կաթնավաճառ մը ունէինք՝ բարի մարդ

մը, որ գործին բերումով ամէն առտու կանուխ, երբ դեռ անոյշ բունի մէջ կ'ըլլային թաղեցիները, խանութին մետաղեայ փեղկը վեր կ'առնէր Նեղացուցիչ ճոնչիւնով, որքան ալ որ կը փորձէր զգոյշ ըլլալ: Յետոյ կաթի խոշոր սաները, ոչ Նուազ դղրդիւնով կը գետեղէր գերմանական բանակայինները յիշեցնող եռանիւ «մօթօսիքլէթ»ին մէջ, փեղկը Նորէն կը թրթռացներ, այս անգամ դէպի վար, խանութը գոցելու համար, որմէ ետք կը սկսէր ընդհանուր լռութիւնը ականահարող բո՛ւն արարողութեան...՝ «մօթօսիքլէթ»ը աշխատցնելու: Այդ անշնորհք մեքենան ալ շուտով աշխատէ՞ր գոնէ: Ուրթ տասը փորձ կ'ըլլար \$ը՛ս, \$ը՛ս..., կը մարեր, Նորէն



Ֆը՛ս, Ֆը՛ս, Ֆը՛ս մինչեւ որ մէկէն ի մէկ բռնկէր ու հնազանդէր տիրոջ յամառ ճիգերուն: Յոն ալ չէր վերջանար գործողութիւնը, եւ որպէսզի չմարի, մարդը այս անգամ եօթը-ութը ահեղ պրուն՛մ, պրուն՛մ-ներով կը փորձէր տաքցնել մեքենան, բայց Նոյն ատեն շխրտացնելով դո՛ւռ, պատուհա՛ն, փե՛ղկ՛, ինչ որ գտնուէր ձայնի ալիքներու գօտիին մէջ: Բնականաբար, մարդոց համբերութիւնը տեղի տուաւ լուրջ դժգոհութեան ու բողոքի, որուն վրայ կաթնավաճառը հասկացողական եւ մեղանշողական հարկադրուեցաւ բեռցուած «մօթօրսիքլէթ»ը լռելեայն հրել մինչեւ Սին Էլ Ֆիլի մայր ճամբան եւ հո՛ն, թաղին անկի՛նը ռմբակոծել խաղաղութիւնը, ճի՛շդ մեր դրացիներէն հանդարտաբարոյ Սարգիս աղային ննջարանի պատուհանին առջեւ: Մէկ-երկու, մէկ-երկու, օր մըն ալ Սարգիս աղան՝ ա՛լ ճարահատ, իր զայրոյթը ցմրուր պարպեց տան տանիքէն շարտուած դոյլ մը լեցուն ջուրին հետ, ֆըս-ֆըսը սկսած չսկսած... «Եօյլէ օլմագ, պէօյլէ օլո՛ւր», «այդպէս չըլլար, այսպէ՛ս կ'ըլլայ»ի օրէնքը առնելով իր ձեռքերուն մէջ, իբրեւ արմատական լուծում տիրող անհամութեան: Ծիշդ չէր եղածը, բայց անկէ ետք ա՛լ կաթնավաճառը չտեսանք: Խանութը ձգեց եւ գնաց ուրիշ տեղ: Յո՛ն ի՞նչ եղաւ... Աստուած գիտէ:

Տարի մը, ճամբաներուն վիրաւոր վիճակը դարմանելու համար Պուրճ Յամուտի քաղաքապետութիւնը ասֆալթի փոխարէն նախընտրեց սիմենթով սալայատակել ամենէն բանուկ փողոցները, ներառեալ մեր տան առջեւիւնը:

Քանի մը օր արգիլուեցաւ ճամբու գործածութիւնը, մինչեւ որ լաւ մը չորնայ սիմենթը եւ Նոր վերքեր չբուսնին անոր վրայ... Անցորդներուն համար սակայն մէկ մայրէն դիմացի մայր անցքը դիւրացնելու համար լաստանման յատուկ կոճղեր զետեղուեցան իբրեւ կամուրջ, ժամանակաւոր կերպով, քաղաքապետարանի ոստիկանի մը սուլիչի հսկողութեան տակ: Երկրորդ օրը, թաղի կատուներէն մին, հլու հնազանդ հետեւելով կանոնին, կամրջակներէն մէկուն վրայէն դանդաղօրէն քալած պահուն, ոստիկանը հեռուէն ազդարարական սաստիկ սուլոց մը արձակեց: Խեղճ կենդանին, շփոթահար, փոխանակ շարունակելու իր ճամբան բնագրական ոստումով մը, ինքզինք գտաւ թաց սիմենթին վրայ ու փախչելու իր անճարակ փորձին մէջ, խորունկ ձիւնի մէջէն քալողի մը պէս չորս թաթերուն փակած սիմենթը սկսաւ թօթուել ու սրսկել չորս դին, մինչեւ որ հեռանայ վտանգէն... Սուլիչը փրկարար դեր չունեցաւ, ընդհակառակը պատճառ դարձաւ, որ կատուին թաթերը յիսունէ աւելի փոսիկներ կտակեն ճամբուն, Յովիվուտի առասպելական դերասաններուն ափերուն պէս:

Անտանելի Էր Նոր Մարաշի եւ ընդհանրապէս Պէյրութի տաքը ամրան եղանակին: Յեղձուցիչ խոնաւութիւնը, քրտինքը, Նահր գետի գարշահոտութիւնը անշնչելի կը դարձնէին մթնոլորտը, երբ դեռ չգոյ էին այսօրուան տեսակաւոր օդախտացուցիչները (air-condition): Մարդիկ մեծով, պզտիկով կը բարձրանային լեռ, երեք ամիս տեւողութեամբ, դէպի սիրուած ամառանոցներ, մասնաւորաբար՝ մէկ գիծէն Ալէյ, Պիամտուն, Սոֆար, Շթորա, Թալապիա, Չահիլէ, Այնճար եւ կամ միւս կողմէն՝ Պիքֆայա, Տիւր Շուէյր, Պոլունիա, Մրուժ, Մթէյն, Պիսքանթա:

Մեր ընտանիքին համար նախընտրելի գիւղը Թալապիան Էր, ուր մեծ հայրս եւ մեծ մայրս գործի կը լծուէին ձմեռնային մթերքներու պատրաստութեան, օգտուելով գիւղին ընձեռած դիւրութիւններէն եւ տեղացիներուն ջե՛րմ, սիրալիր ընդունելութենէն: Խաղողի հիւթով սուճուխ, սամսա, պաստիխ եւ կամ թարխանա, լոլիկի ջուր, թուրշիի տեսակներ կը պատրաստուէին յատուկ բժախնդրութեամբ, խիստ համեղ, ընդառաջելու համար Պէյրութէն նախապէս կատարուած ապսպրանքներու երկար շարքին:



«Չաբարին փոստան» (մարդատարը) կը կատարէր ընտանիքներու դէպի գիւղ փոխադրութիւնը, յատուկ ժամադրութեամբ ու ժամանակացոյցով, այնքան որ բռնուած կ'ըլլար մեքենան: Արտագաղթի արարողութեան պէս տան ապրանքները խոհանոցէն մինչեւ ննջարան, տուփերու եւ փաթեթոցներու մէջ կը բեռցուէին «փոստա»յին տանիքը, ետեւը եւ ներսը, աթոռներուն վրայ ու երգով, ծիծաղով, ուտելով կը բարձրանայինք լեռ, հաճելի օրերու ակնկալութիւններով: Յայրս՝ դերձակ, գործի բերումով Պէյրութ կը մնար եւ մեզի կը միանար Շաբաթ օրերու յետմիջօրէին, Կիրակի երեկոյեան վերադառնալու պայմանաւ:

Թալապիա՛...

Չուտ մահմետական գիւղ էր, քրիստոնեայ Շթորային եւ Չահլէին մէջտեղը: Յայ ըլլալով մէկ կամ երկու ընտանիք կ'երթար հոն, հակառակ անոր, որ գիւղացիները խորունկ յարգանք եւ վստահութիւն կը տածէին մեզի հանդէպ, գնահատելով ամէն ամառ իրենց գիւղը ընտրած ըլլալու մեր որոշումը: Շատ ապահով կը զգայինք իրենց մէջ եւ մեծերու քաջալեր վերաբերումին դիմաց փոքրերս՝ մահմետական-հայ սերտ բարեկամութեամբ կը խաղայինք, արշաւներ կը կազմակերպէինք, որսի կ'երթայինք եւ զարնուած թռչուններն ալ հաւասարապէս կը բաժնուէինք մեր միջեւ:

Մեծ հայրս խանութ մըն ալ կը վարձէր Շթորա-Չահլէ մայր ճամբուն վրայ, Նպարավաճառութեամբ լեցնելով իր ժամանակը, մինչեւ որ հասուննային խաղողները: Իր քովը՝ մսագործ Ահմետն էր, որ կենդանիները կը մորթէր խանութին առջեւ եւ արիւնն ալ կը լուար դէպի ճամբայ, բաց հրաւեր ուղղելով գիւղի ճանճերուն եւ իշամեղուններուն: Օր մըն ալ կէս մորթուած կովը իր ոտքերուն ամրացած չուանէն պրծաւ եւ խելագարած վիճակով սկսաւ վազել մայր ճամբուն վրայ, աջ-ձախ, խուճապի մատնելով շարժավարները, մինչեւ որ կորսնցուցած իր արիւնէն ուժասպառ ծունկի գայ ու վերադառնայ Ահմետին դանակին:

Թալապիան նշանաւոր էր իր խաղողով, ոչ շատ հեռու Քսարայի քաղցրահամ թուզէ, Այնճարի ակին զուլալ ջուրերէ, Թանայիլի խիտ անտառներէ, Շթորայի խշշացող բարտիներէ եւ Չահլէի դրախտային Ուատիյէն... Աւանդական սուճուխի պատրաստութեան համար խաղողը կը կոխկրտուէր երկար սնտուկներուն մէջ, ապա մեծ կաթսաներով անոր հիւթը ժամերով կ'եփուէր, մինչեւ որ լաւ մը թանձրանար ու իր մէջ ընկալէր շարան-շարան դերձաններու վրայ անցուած դամասկոսեան ընտիր ընկոյզը, քանի մը անգամներ, աւելի ուշ լուացքի պէս կախուելու արեւուն տակ, օրեր շարունակ: Իսկ յոգնութեան ծարաւն ալ կը յագեցուէր պատուհանին առջեւ դրուած կուժին պճիլի լեզուակէն օդէն դէպի կոկորդ ջրվիժող սառա՛ծ, համո՛վ ջուրով, այսօրուան բլաստիք շիշերու ջուրերէն շատ աւելի առողջարար...

Տետես, գիւղէն քանի մը քիլոմէթր վեր, բլուրի լանջին, ամէն ամառ, լայն տարածութեամբ Նոյն այգին կը վարձէր ա՛յս Նպատակին համար եւ էշ մըն ալ՝ իբրեւ փոխադրութեան միջոց դէպի այգի ուղղուող արահետներէն: Շատ օրեր, ես ու քոյրս իշուն կռնակը, իսկ երկուորեակ եղբայրներս անոր երկու կողմերէն կախուած սնտուկներուն մէջ այգի կ'երթայինք պտոյտի: Էշը ալ գոց սորված էր տեղը:

Պէյրութէն այցելուներ կ'ունենայինք յաճախ:

- Գասպար աղա, եկանք խաղողը ուտելու: Թալապիային խաղողը ուրիշ է: Կարօտցանք:



- Էշը հո՛ն է, թուզին ծառին կապուած, խանութին առջեւ: Քակեցե՛ք, թող քալէ, դուք ալ հետեւեցէք, մինչեւ հոն, ուր որ կը կենայ: Իշտէ անհկա մեր այգին է, կերե՛ք որքան որ կ'ուզէք, հետերնիդ ալ առէք: Ես խանութէն չեմ կրնար հեռանալ:

Չոր զովութիւն մը ունէին Թալապիային գիշերները: Երկինքի յստակութիւնը վայելել կու տար աստղերը, երբ որոշ օրեր դուրսը կը քնանայինք, մեր աչքերը՝ անսահման երկնակամարին, Արարչի ստեղծագործութեան զմայլանքով, մինչեւ որ քունը փոխադրեր մեզ երազներու աշխարհ, այսօրուան արդիական ննջարաններէն աւելի բնական ու հանգիստ: Այո՛, կայի՛ն անկոչ հիւրերու այցելութիւնները, կարիճ, սարդ, մուկ, մողէզ, օձ եւ միջատներու տեսակներ, բայց երբ կը յարգէինք անոնց ապրելու իրաւունքը, առանց իրար անցնելու, անոնք ալ կը ձգէին որ հանգիստ քնանանք...

Խենթ կ'ըլլայինք շոգեկառքին, որ Ռայաքի կեդրոնական կայարանէն կու գար Սաասնէլի կայարանը՝ գիւղին հիւսիսը եւ դէպի Տահր Էլ Պայտար իր ճամբուն վրայ կը ճեղքէր Թալապիան, կ'անցնէր մեր տան ետեւէն վախազդու \$շշոցով, ահեղ զանգուածով, երկրաշարժային ցնցումով: Զեռուէն երբ ծուխը երեւար, մանկական հետաքրքրութեամբ կը վազէինք մինչեւ երկաթուղագիծ ու ձեռքերը օդին ուրախութեամբ կը բարեւէինք հանքածուխէն սեւցած վարորդները, որոնք միշտ ալ երկու կտրուկ սուլոցներով կը փոխադարձէին մեր հրճուանքը: Մինչեւ վերջին վակոնին անցքը դեռ կը մնայինք հոն, սեւ, անախորժ ծուխին մէջ, մինչեւ անոր տարտղնուիլը գիւղի հովերէն:

Յիմա, շատ, շատ տարիներ անցած՝ այս բոլորէն, Մ. Իշխանի «Մասս Բարով Մանկութիւն»ի զգացումներով ամէն անգամ որ կը վերադառնամ այն վայրերուն, ուր մեր մանկական ոտքերը գետին շոյեցին Նոր Մարաշէն Թալապիա, կը տեսնեմ ժամանակին յառաջացուցած փոփոխութիւնը, ամէնուրեք: Ո՛չ Գասպար աղա, ո՛չ մեր տունը, ո՛չ բաղնիքները, ո՛չ մայրս ու հայրս, ո՛չ սիմենթ ճամբան, ո՛չ «Անդր Նահրի հայութեան հոծ լոյս կեդրոն դպրոց»ս՝ Քառասուն Մանկանցը, ո՛չ Սեդրակ Չաւէն, ո՛չ Չարեհ Չարգուն, ո՛չ Էմմի Օղլու, ո՛չ «Չաքարին փոստա»ն եւ ոչ ալ՝ շոգեկառքը...: Ամէնքն ալ կը պատկանին անցեալի քաղցր, պարզ, անմեղունակ օրերուն, որքան ալ որ հիմա կը ճօճուինք աւելի բարօր, փարթամ ու ճոխ կեանքի մը օրօրոցին մէջ:

Ի՞նչ է գինը այդ կեանքին սակայն: Զեւթոտ վազքը՝ այս անգամ համաշխարհայնացումի եւ արդիականութեան բեմահարթակին վրայ, համացանցէն մինչեւ բջիջային, քաղաքական խաղերէն մինչեւ տնտեսական տազնապներ, ազգային մտահոգութիւններէն մինչեւ զաւակներու ապագայ, հացի պայթարէն մինչեւ առողջական հարցեր, գերարդիական ինքնաշարժներու խառնարան պողոտաներէն մինչեւ օդակայաններու թոհուբոհ, անբաւարարութեան քմահաճոյքէն մինչեւ զիրար գերազանցելու մրցակցական կամապաշտութիւն: Երեւոյթներ, որոնք կը կլանեն մեր առօրեան, տուն տալով այդ անվերջ «stressful» վազքին, վա՛զք, վա՛զք, վա՛զք, հասնելու համար ո՞ր...

Յո՛ն, ուր որ էի՞նք երէկ: Թերեւս:

14 Սեպտեմբեր, 2019

Նիկոսիա



## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ



Կեղծ մարգարէներ դեռ պիտ'գան հանդէս

Եւ պիտ' բարբառին միշտ ճշմարիտէն

Բայց ճշմարիտը մեր սրտին մէջ է

Թէ կարենանք մենք տրոփիւնը լսել...

.....

Թէ հայրենիք պիտ'կառուցես

Ոսկի, արծաթ էական չեն

Սիրոյ շաղախ պիտի դնես

Որ ամրանայ շէնքդ վսեմ...

.....

Շիթ մը արցունքն հազար բառ է

Լաւա որպէս հոսի աչքէդ

Սիրտ հրաբուխի ակունքներէն

Ինչպէս բոցը կրակէն հրկեզ...

.....



Փառքի մուրացկան թէ որ դուն ըլլաս  
Ազատութիւնդ պիտի զոհես թանկ  
Արգելափակես թռիչքը հոգիիդ  
Եւ դառնաս ստրուկն այլոց քմայքին...

.....

Սիրոյ մասին անչափ տողեր  
Անչափ բառեր կան քաղցրագին  
Բայց ամէն տեղ սիրոյ քաղց է  
Սիրոյ կարօտ կայ տրտմագին...

.....

Տողերուս մէջ հոգիս ցոլաց  
Բիւրեղափայլ գերթ ցօղն բուրեան  
Բայց խորքն անոր մնաց անհաս  
Չերթ տիեզերքն է բարդ ի բարդ...

.....

Համակ կեանք մը մենք կ'որոնենք  
Ճշմարտութեան լուսէ հատիկն  
Եւ չենք գտներ մենք երբեւէ  
Չայն փնտռելն է իմաստն կեանքի...

.....

Կարենալու համար ճախրել  
Պիտի սուզուիս խորքը հոգւոյդ  
Անկէ պիտի սլացք առնես  
Ու սաւառնիս բարձունքներուն...

.....

Լռութիւնս տիեզերաչափ  
Ես մսխեցի սին բառերով



---

Ինչպէս գանձ մը փոշիանայ

Մանրադրամի վերածուելով...

.....

Ապրումներս լուսաթախիծ

Ծանակեցին փոքր մարդիկ

Իրենց համար վայելքը սին

Կեանքի իմաստ էր, բանալին...

.....

Արդե՞՞ք պատիժ թէ՞ մի գանձ է

Խորխորատներն իջնել հոգւոյն

Տառապանքի հուր ստեղծել

Որ հրկիզուիս իր բոցերուն...

.....

Բառ ու տողդ սիրտեդ անցուր

Նախքան որ գայն խօսիս, գրես

Բերնէդ ելածն երդումի պէս

Չունենայ բնաւ կաթիլ մը սուտ...

.....

Քեզ ո՛չ ոք պիտ' չհասկընայ

Սիրտդ այդպէս դուն մի՛ բանար

Ե՞րբ է եղեր որ մերկ աչքը

Տեսնէ սիրտի խորխորատը...

.....

Ամէն հոգի երգ մը ունի

Ինչպէս ծաղիկն՝ բուրմունքը իր

Պիտի չըլլա՞ր շատ տաղտկալի

Թէ ըլլար լոկ երգն պլպուլի..





.....

Թէ մէկը քեզ գովարանէ

Յանկարծ ամբոյս մը զայն կրկնէ

Թէ մէկը քեզ նսեմացնէ

Նոյն ամբոյսը քեզ խաչ հանէ...

.....

Երբ արժէքներն կը նահանջեն

Չարժէքները կու գան հանդէս

Աղաղակով որոտածայն

Կը բրտացնեն հոգին մարդկանց....

.....

Չիլ աղմուկ է, եռուզեռ է

Առատ սեղան ու խնճոյք է

Յոգին սակայն բացակայ է

Յոգեզուրկը անիմաստ է...

.....

Սխալն իմս էր որ այս դարին

Անհոգի եւ անխիղճ դարին

Ես միշտ հոգին լոկ փնտռեցի

Յոգեծարաւ միշտ մընացի...

.....

Ես իմ գործս կատարեցի

Խղճի մտօք, անփոխադարձ

Ի՛նչ փոյթ ըլլան ուրացողներ

Խիղճս մաքուր, ջիւջ է անչափ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ